

Վարդան Գ. Դերիկյան
Բանասիր. գիյր. դոկտոր

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՒՄ

Ծննդյան 200-ամյակի առթիվ*

Բանալի բառեր – Ալիշան, Հայոց պատմություն, «Հայաստանում», Հայաստանի աշխարհագրություն, «Դրախտ Հայաստանի», Անի, Ջեյթուն, Սյունյաց աշխարհ, Արցախ:

Մուտք

Ալիշան ստեղծագործողի մեջ ոչ միայն զարմանալիորեն զուգակցվում, այլև իրար էին միախառնված բանաստեղծն ու գիտնականը, ուստի հայագիտական ուսումնասիրություններում որպես սկզբնաղբյուր օգտագործելով մեր մատենագրությունը, նա՝ իբրև բանաստեղծ, չէր կարողանում զսպել իր հիացմունքը՝ այն արտահայտելով համապատասխան բնորոշումներով: Հայ միջնադարյան մատենագրությունը Ալիշանին հետաքրքրում էր պատմաբանասիրական տեսանկյունից, իսկ քննության ընթացքում էլ նա չէր կարողանում մնալ սառը հետազոտողի դերում:

1913 թ. գրված իր հոդվածում Դանիել Վարուժանը խտացված ձևով արտահայտում է այն միտքը, թե Ալիշանը դարձավ Մխիթարյան միաբանության խորհրդանիշը. «Ալիշանի ոգիին մեջ ամբողջ մխիթարյան առաքելությունը կը տեսնեն»¹, քանզի նա «ամեն մեկ ավանդության հավատացան սուրբի մը հավատքով, փոխանակ գիտունի մը սկեպտականությամբ»²:

Ալիշանի գրեթե բոլոր գործերում շեշտվում էր մեր երկրի աստվածատունկ դրախտը և մեր եկեղեցու առաքելահաստատ լինելը, որը նրա համար թե՛ գեղարվեստական ներշնչում էր և թե՛ ելակետը գիտական բոլոր գործերի: Այնինչ 18-րդ դարի վերջից Եվրոպայում ոչ միայն ուժեղացավ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2020:

1 **Դանիել Վարուժան**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Եր., էջ 182:

2 Նույն տեղում, էջ 183:

հետաքրքրությունը Հայաստանի և հայ մատենագրության հանդեպ, այլև շատ դեպքերում մերժվեց աստվածաշնչյան պատմությունները Հայաստանի հետ կապելու ավանդույթը, ինչպես նաև կասկածի ենթարկվեցին մեր պատմագիրների և նրանց գործերի վավերականության ավանդական ըմբռումները, ինչը կապված էր քննական պատմագիտության զարգացման հետ: Դա խոր ցավ էր պատճառում Ալիշանին: Ինչպես գրում է Մխիթարյան միաբանության անդամներից Հովհաննես Թորոսյանը իր հուշերում. «Չարաչար կվիրավորվեր ան այն նորանոր քննադատությանց հարձակումներեն, որոնք կխլեին մեզմե մեր ազգային պարծանքները, որոնց ինքը ջերմ պաշտպան էր: Ան ոճիր մը կհամարեր Խորենացվո գոյությունը Ե դարեն տանիլ Է կամ Ը դարը, ինչպես ոճիր մ'էր հանել գերեզմանեն անոր ոսկորները և գետը նետել: Ան երբեք չներեց անոնց՝ որոնք Մասիսու ծայրեն տարին չգիտեմ որ լեռան ծայրը հանգչեցուցին Նոյի տապանը, ինչպես նաև անոնց՝ որոնք դրախտին տեղը տարին Գանգեսի կամ Նեղոսի ափանց վրա գետեղեցին»³:

Մեր գրականության և մշակույթի պատմության մեջ չկա երկրորդ մի անձնավորություն, ով հավասարապես գիտագեղարվեստական քննության ենթարկված լինի հայոց պատմության տարբեր իրադարձությունները՝ կազմելով դրանց մատենագրական սկզբնաղբյուրների բնագրերը, վերջիններս ենթարկելով պատմագիտական քննության մխիթարյան պատմահայեցողության ու աշխարհայացքի շրջանակում և պատմական նույն այդ դեպքերը երկհատոր «Յուշիկը Հայրենեաց Հայոց»-ի արձակ դրվագներում ու «Նուագք»-ի հինգ հատորներից «Հայրունի»-ի բանաստեղծություններում անց կացնի իր ստեղծագործական երևակայության քուրայով:

Ուստի մեր շարադրանքում կփորձենք ներկայացնել այն սերտ դաշնությունը, որ հայոց պատմության տարբեր թեմաների լուսաբանման ժամանակ կա բնագրագետ, պատմաբան և գեղարվեստական երկերի ստեղծագործող Ալիշանի միջև:

1. Հայոց պատմության սկզբնաղբյուրների հրատարակումը

Հայ դասական մատենագրությունը և հայոց պատմության հերոսական ու նվիրական էջերը ժողովրդին առավել մատչելի ներկայացնելու համար Ալիշանը ձեռնամուխ եղավ պատմագրական անհամեմատ պարզ շարադրանք ունեցող մատենագրական մանր երկերի հրատարակությանը՝ զետեղելով դրանք «Սոփերք Հայկականք» մատենաշարում, որի առաջին գիրքը լույս տեսավ 1853 թ.: Շարքի Զ և Է հատորները նվիրված են Ներսես Մե-

3 Ալիշանը ժամանակակիցների հուշերում, աշխտ. Ս. Շոիկյանի, Եր, 1971, էջ 110:

ծին: Զ հատորն ունի առաջաբան, ուր Ներսեսը բնութագրվում է որպես «մեծ արդարապէս ձայնեալ և երկրորդ Լուսաւորիչ»: Է պրակը միանգամից սկսվում է «Յաղագս հայրապետութեան Սրբոյն Ներսէսի» գործով: Միննույն անձին նվիրված գույգ հատորներից միայն առաջինի առաջաբան ունենալը վկայում է, որ Ալիշանի արժևորումները նվիրված են ոչ թե հրատարակվող գրական ստեղծագործությանը, այլ գլխավորապէս նրա հերոսին:

Զ հատորի Ներսես Մեծի պատմության համար Ալիշանը որպէս բնաբան բերում է Բուզանդի՝ նրան նվիրված տողերը: Նման բնաբանների ընտրության պատճառը միայն գրական կերպարի առավել ամբողջականացումը չէր: Քանի որ այս շարքի հրատարակության գլխավոր պատճառներից մեկը մեր դասական պատմագրության ընկալման որոշակի դժվարությունն էր, Ալիշանը ձեռնարկում է պատմագրական երկերի ոգուց և տրամաբանությունից բխող հիշյալ մատենագրական մանր երկերի տպագրությունը, իսկ պատմիչներից բերված նման բնաբաններով էլ ոչ միայն պանծացնում է Ներսես Մեծին և մյուսներին, այլև ցույց տալիս, որ սրբախոսական այս գործերը բխում են դասական մատենագրության համապատասխան երկերից, որով և առավել վավերական են դառնում:

Ճնշված և ազգային անկատար երազներ ունեցող ժողովուրդներին բնորոշ է իրենց ձգտումներն արտահայտել այլաբանական ու փոխաբերական տարբեր միջոցներով և հատկապէս պատմական գուգահեռներով: Գրական այս միջոցին առավել դիմողներից մեկը երկու կայսրությունների միջև բաժանված և, բացի հալածանքներից ու ճնշումներից, նաև դաժան գրաքննության ենթարկվող հայ ժողովուրդն էր: Մխիթարյաններն էլ, որոնց արտաքին գործունեության հիմնական ոլորտը Պոլիսն էր և Օսմանյան կայսրության հայաքնակ գավառները, ենթարկվում էին գրաքննական կրկնակի ճնշման և մատնությունների, քանի որ օսմանյանին գումարվում էր և Հռոմի պապակալնը: Ահա թե ինչու մխիթարյանները հաճախ էին դիմում անցյալի պատմությանը՝ ժամանակի հուզող հարցերին արձագանքելով, հանդես էին գալիս ինչպէս պատմական թեմատիկա ունեցող ստեղծագործություններով, այնպէս էլ մեր հին մատենագրության բնագրերի հրատարակությամբ:

Դա վերաբերում է մանավանդ Ալիշանին: Նրա «Սովերքի» հատորներն անուղղակի և նրբին արձագանքն են ժԹ դարի հիսունական թվականների մեր ազգային խնդիրների: Սրբախոսական գրականության տարբեր ժանրերը՝ վարք, վկայաբանություն, ողբ, տեսիլ, ներբողյան, ներկայացնող «Սովերքի» հատորները թեմատիկ առումով բաժանվում են մի քանի խմբի՝ ունենալով, սակայն, նույն ազգային նպատակը հետապնդող ուղղվածությունը: Առաջին խումբը Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին ու Լուսավորչի տոհմին նվիրված վկայաբանություններն են: Այն ժամա-

նակ, երբ փորձեր էին արվում հայ եկեղեցին ներկայացնել որպես մի հերձված, Ալիշանը հրատարակեց այս գործերը՝ ցույց տալու համար մեր եկեղեցու առաքելականությունը և Լուսավորչի տոհմի նման երանաշնորհի հայրապետներ ունենալը՝ այս իրողությունը հպարտությամբ շեշտելով հրատարակվող հատորների առաջաբաններում և ծանոթագրություններում:

Հաջորդ խումբը կապվում է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Սարկավազ Իմաստասերի և ընդհանրապես մեր դպրության ու հոգևոր մշակութային մեծերի հետ: Ալիշանը ցանկանում էր, որ այս գործերով ընթերցողներն ընթանան Թարգմանչաց շավղով, հետևեն առաքինություններին և հեռու մասն հոգևոր-բարոյական մոլորություններից:

Վերջին ծավալուն խումբն էլ այն վկայաբանություններն են, որոնց հերոսները, լինելով քրիստոնյա նահատակներ, նաև հայրենիքի համար իրենց կյանքը գոհաբերած հերոսներ էին: Օսմանյան կայսրության մեջ հայության դեմ գնալով ուժեղացող հավածանքների պայմաններում «Սովերբի» հերոսների օրինակով Ալիշանը հորդորում էր հավատարիմ մնալ հայրենատուր ավանդներին և նահատակների արյամբ ոռոգված հողին:

Առանձին գրքով Ալիշանն առաջինը հրատարակում է Վարդան պատմիչի պատմությունը: Այս հրատարակության առաջաբանում ևս «Սովերբի» նման նախ՝ արժևորում է պատմագիրքը, այնուհետև ներկայացնում Վարդան պատմիչի (Արևելցու) մատենագրական ժառանգությունը՝ շեշտելով, որ նրա գործերի մի մասն ավելի բանաբաղական, քան ինքնուրույն են: Միաժամանակ կարևորում էր այն հանգամանքը, որ շնորհիվ նման բանաբաղության՝ պահպանվել են քաղվածո շատ հատվածներ այն երկերից, որոնց բնագրերը կորել են⁴: Ալիշանը շեշտում էր, որ եղիշեի «Արարածոց մեկնությունը» կարելի է վերականգնել նման բանաբաղական գործերի մեջ պահպանված հատվածներով: Մի աշխատանք, որը մեկ դար անց կատարեց Լևոն Խաչիկյանը⁵:

Այնուհետև Ալիշանը հրատարակել է Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց»-ը, որը համարում է ընդհանուր և հայ ժողովրդի պատմության կարևոր սկզբնաղբյուր: Հատկապես շեշտում էր Գանձակեցու Պատմության երկրորդ՝ մոնղոլ-թաթարական արշավանքներին վերաբերող մասը, իսկ հայոց պատմության տեսանկյունից՝ իբրև ականատես նկարագրողի «Աղուանից հայոց» դեպքերի⁶:

Ալիշանի համար վավերական իրողություն էր հայ եկեղեցու առաքելական լինելը, ի հավաստումն որի երկար որոնումներից հետո նա հայտնաբերում ու հրատարակում է Խորենացու պատմության մեջ առկա Աբգարի Թղթից բացի առանձին մի խմբագրությամբ պահպանված «Թուղթ Աբ-

4 Տե՛ս Հուսեփոս Գատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ Լ:

5 Տե՛ս Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Եր, 1992, էջ 27-28:

6 Տե՛ս Կիրակոսի վարդապետի Գանձակեցու Համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ Ե:

գարու» գործը: Վերջինիս հրատարակության առաջաբանը ևս շարադրված է նույն ոգեշունչ գեղարվեստականությամբ՝ Աբգար թագավորին գրեթե համապատիվ ներկայացնելով առաքյալներին:

2. Հայոց պատմության տարբեր դրվագների և հայ պատմագրության ալիշանյան հանրագումարը

Ալիշանի ավելի քան կեսդարյա գիտագեղարվեստական գործունեության ամփոփումը դարձավ «Հայապատումը»: Կյանքի մայրամուտին հասած գիտնականի պատմաբանասիրական և տեղագրական ուսումնասիրություններն իրար միաձուլող մեծածավալ այս հատորն ունի ուրույն կառուցվածք: Առաջին՝ «Պատմիչք Հայոց» մասը նվիրված է հայ պատմագրությանը, իսկ երկրորդը՝ «Պատմութիւնք Հայոցը», հայոց պատմությունն է՝ ներկայացված հայ մատենագրությունից վերցված և մինչև 17-րդ դար հայոց պատմության ընթացքը ներկայացնող 400 հատվածներով, որոնց մի մասը, վերնագրված չլինելով բնագրերում, խորագրվել են Ալիշանի կողմից՝ դառնալով ներկայացվող նյութի սեղմ և ամփոփ բնորոշումները:

«Հայապատումը» չնայած լույս է տեսել դարասկզբին, սակայն նշանավորում է ավարտը և ամփոփումը հայ ավանդական բանասիրության: Թեև Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոցից» մինչև «Հայապատում» ավելի քան մեկ դար էր անցել, բայց պատմահայեցողության առումով և ավանդական պատմագրության հանդեպ Ալիշանի հայացքներում որևէ էական փոփոխություն չէր կատարվել, բացառությամբ մատենագիտական բնույթի հավելումների և բանասիրական ճշգրտումների:

«Հայապատումը», ներառելով մինչև 19-րդ դարավերջը հրատարակված և հայագիտությանը հայտնի նյութերը, պատմահայեցողությամբ, ուղղվածությամբ և շնչով առավել կապված է 19-րդ դարի 40-60-ական թվականների Մխիթարյան ավանդույթին: Հաջորդող տասնամյակների ընթացքում ոչ միայն չփոխվեցին Ալիշանի հայացքները, այլև նա ժամանակ չունեցավ մի վերջին անգամ խմբագրելու և վերանայելու ինչ-ինչ հարցեր: Իր իսկ խոստովանությամբ՝ այն ավարտել է 1900 թ. «արդէն յոգնած անձամբս՝ եթէ ծերութեամբ և եթէ՝ որևէ տկարութեամբ»⁷:

Ալիշանը, ասես զգալով, որ հայ պատմագրությունը ավանդական հայեցակետով ներկայացնելը ժամանակավրեպ կդիտվի, կարծես խուսափելով հնարավոր քննադատությունից՝ գրում էր. «Իմ նպատակս չէր պատմութեանց ստուգութիւնը քննադատել, ինչպէս հիմա կ'ընեն ոչ սակաւ բանասէրք մեր (իմաստութեամբ և իմաստակութեամբ ևս, չափով և չափազանց), այլ մեր հե-

7 **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, մասն Ա, Պատմիչք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 9:

ղինակաց հաւատքն և կարծիքը ներկայացնել աւելի իրենց պատմական ոճը դիտելով, քան գիտութիւնը»⁸ :

«Հայապատումի» առաջաբանը նվիրված է պատմությանը, նրա գրական արտացոլմանը, իմացության կարևորությանը և հասարակական նշանակությանը: Ըստ Ալիշանի՝ գրականությունը պատմության գրավոր վավերական՝ փաստալից կամ գեղարվեստական արտացոլումն է, անդրադարձը: Անգամ մանուկների երևակայությունը վառող գրույցները պատմություն են: Ալիշանը գրում է, որ մարդը «ի ծագել մտաբացութեանն՝ ախորժի լսել պատմութիւն կոչուածը»⁹: Պատմության առաջին լսողը եթե դեռևս խանձարուրում գտնվող և նոր-նոր միտքը բացող երեխան է, ապա, բնականաբար, նրան առաջին պատմությունները պատմող պատմաբանն է մայրը կամ դայակը¹⁰:

Այս պատկերով Ալիշանը ցանկանում է ասել, որ մայրական կաթով և առաջին պատմություններով է սկսվում մանկան ֆիզիկական և մտավոր զարգացումը: Ինչպես Նալբանդյանը բանաստեղծության լեզվով էր ասում, թե ազատությունը ծնվելու պահից իսկ դրսևորվող մարդկային բնական ճրգտում է, այնպես էլ Ալիշանը գտնում էր, որ բանականության սաղմնավորումը՝ «ծագել մտաբացութեանն», ուղեկցվում է պատմության իմացության ձգտմամբ, որն էլ հանգում է ազատության և այն պահպանելու, վերանվաճելու գաղափարին:

«Հայու զաւակն», ըստ Ալիշանի, պետք է սիրի «Զպատմութիւն Հայուն»¹¹: Պատմության իմացության կարևորությանը և հասարակական նշանակությանը անդրադարձել են նաև Ալիշանին ժամանակակից ու ավագ մխիթարյանները: Այսպես՝ «Պատմութիւն Հայոց»-ում Միքայել Չամչանը խնդրելով, որ ուշադիր վերաբերվեն իր գործին, բարիք քաղեն պատմությունից, ասում էր, որ եթե սոսկ հետաքրքրության համար են ընթերցում, «ընդունայ» է: Արդյունավոր էր համարում այն ընթերցանությունը, որը հիշողությունը պատմական փաստերով է ծանրաբեռնում, իսկ եթե կարդում են «վասն ստանալոյ զհանձար՝ առ ի ուղղելոյ զգնացս անձին», որպեսզի ստացած իմաստությամբ ուղղի իր ընթացքը, առավել արդյունավոր է դառնում նման ընթերցումը¹²: Այսպիսով՝ Չամչանը իր աշխատությունը առաջին հերթին ուղղում է այն ընթերցողին, որը դասեր կքաղի պատմությունից:

Անդրադառնալով պատմագրական երկերի հղացման շարժառիթներին, ստեղծման պատճառներին՝ Ալիշանը գտնում է, որ մեր բոլոր պատմիչները գրել են «նախնեաց յիշատակներն անկորուստ պահելու փափա-

8 Նույն տեղում, մասն Ա, էջ Գ:

9 Նույն տեղում, մասն Ա, էջ Ա:

10 Տե՛ս նույն տեղում, մասն Ա, էջ Ա:

11 Նույն տեղում, էջ Ա:

12 Տե՛ս Միքայել Չամչան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 42:

գով» և «քաջութեան գործերն անմոռաց պահելու համար մինչև ի յետին դարս»¹³:

«Հայապատումի» առաջին իսկ միավորը սկիզբն է Դրասխանակերտցու Պատմության: Այն պատմիչի նոտ թեն գլխաբաժանում չունի, սակայն բերվող հատվածը Ալիշանը խորագրել է «Ծագումն Հայոց յորդոց Յաբեթի»¹⁴: Այսինքն՝ հայ պատմագրության հետևողությամբ հայ ժողովրդի սկզբնավորումը բխեցվում է Նոյի որդուց, ինչպես «Հայկազյան բառարանն» է «Հայ» բառի դիմաց գրում. «Ազգ արամեան, որ ի Հայկայ Թորգոմեան Յաբեթեանց»:

Հայոց պատմությունը բխեցնելով համաշխարհային պատմությունից, որի սկզբնավորումը, ըստ Ալիշանի ընկալման, նույնանում է «Ծննդոց գրքի» հետ, այն հասցնում է մինչև աշտարակաշինություն, որից հետո էլ շարունակվում է Հայկ Նահապետով՝ ազգային ընթացքով: Պատմիչներից, հիմնականում Խորենացուց ընտրված հատվածներով ընթերցողը հետևում է Հայկի ժառանգների՝ Հայկական լեռնաշխարհում տարածվելուն «Որդիք և թոռունք Հայկայ և բնակութիւն նոցա» խորագրով դրվագում¹⁵:

Ալիշանի անձնական ապրումների և զգացմունքների արձագանքը եղող ծանոթագրությունները միջանկյալ տեղ են գրավում բանասիրության և գեղարվեստի միջև՝ որպես գիտական քննության պատկերավոր դրսևորումներ: Հեթանոսական շրջանին վերաբերող ծանոթագրություններում իշխում են հերոսականությունն արտահայտող բառեր: Այսպես՝ ներկայացնելով Արամին նվիրված Խորենացու ծավալուն հատվածը, Պատմահոր «Սա այր աշխատասէր և հայրենասէր» տողի մասին գրում է. «Առաջին անգամն ի մեր պատմութեան, որ լսուի այս պանծալի, այլև նորափառ կոչումն՝ հայրենասէր»¹⁶:

Մեր գրականագիտության մեջ առաջինը Ալիշանն է մատնացույց արել Բուզանդի «Պատմության» տարբեր հատվածներում հիշվող ֆեոդալական նվիրվածության գեղեցիկ դրվագները: Հատկանշական է հետևյալ հանգամանքը: Միևնույն պատմական իրադարձությունը եթե նկարագրել են մի քանի պատմիչներ, վավերականության առումով Ալիշանը նախընտրել է Խորենացուն, իսկ հերոսականությունը շեշտելիս՝ Բուզանդին: Հաճախ էլ միևնույն դեպքը ներկայացնում է մի քանի վկայությամբ, առաջինը՝ որպես առավել ստուգապատում, երկրորդը՝ հերոսական և երրորդը՝ նկարագրության գեղեցիկ շարադրանքի համար:

Ռոմանտիզմի հետևողությամբ քաղվածո այս հատվածներով Ալիշանը նաև կերպարային բնեռացումներ է ստեղծում՝ Դրաստամատ - Բատ Սահա-

13 Հայապատում, մասն Ա, էջ 10:

14 Հայապատում, մասն Բ, Պատմութիւնք Հայոց Վենետիկ 1901, էջ 1:

15 Տես նույն տեղում, մասն Բ, էջ 12:

16 Նույն տեղում, մասն Բ, էջ 16:

ռունի և նման զույգային հակադրություններով ներկայացնելով հայոց պատմության հայրենասերներին ու դավաճաններին, պատմիչների տողերին հավելելով իր մեկնաբանությունները:

«Հայապատում» անվանումը լավագույնս է արտահայտում գրքի ողջ էությունը: Այն իր կյանքի վերջալույսին հասած Հայոց Նահապետի՝ մեր պատմությանն ու գրականությանը նվիրված վերջին պատումն է, ուր բանաստեղծ գիտնականը, վերջին անգամ հայացքը սահեցնելով անցնող դարերի վրայով, ոչ միայն թվարկում է այդ դարերում ստեղծված երկերը, այլև արժևորում ու իմաստավորում է դրանք:

Գրականության և պատմության փոխհարաբերություններում գրական երկերի ծնունդը և նրանց հետագա կենցաղավարումը կենդանի կյանքով և վերջինիս առաջադրած պահանջներով պայմանավորող Ալիշանը գտնում էր, որ հայ պատմագրության տարբեր հուշարձանների գրության ժամանակը միայն բնագրական-աղբյուրագիտական քննությամբ չէ, որ կարելի է պարզել, այլև այդ գործերի ներքին տրամաբանությամբ և ազգային կյանքում խաղացած դերով, որն էլ կարող է հուշել, թե նրանք երբ են ստեղծվել և ներառվել գրական կյանքում:

Անհրաժեշտ է նշել, որ մատենագիտական աշխատանքից «Հայապատումը» զատորոշող երկրորդ հանգամանքը, հեղինակներին ներկայացնելիս իր անձնական զգացմունքներն ու վերաբերմունքը արտահայտելուց հետո, Ալիշանի բուռն ձգտումն է հայ պատմիչներին պաշտպանել եվրոպական հայագիտության ժխտողական վերաբերմունքից: Ալիշանը, բանասիրական փաստարկներից բացի, վկայակոչում է նաև անցյալի հեղինակություններին այն հիմնավորմամբ, թե ինչպես է, որ նախորդները հիացել և հավատացել են նրանց, իսկ ժամանակակից որոշ հայագետներ ժխտում են: Այս առումով բնորոշ են Եղիշեին նվիրված տողերը. «Օտարք մեզմէ յառաջ զմայլեր և Հայոց Քսենոփոն անուաներ են զԵղիշէ և ամենայն թարգմանողք և ընթերցողք քան զգովեստ աւելի բան չեն կրցած գրել՝ մեր այժմու դեռակիրթ գրչաց թողլով ցուրտ քննադատութիւններ»¹⁷:

«Ցուրտ քննադատություն» արտահայտությունը Ալիշանը գործածում է այն դեպքերում, երբ ժխտվում էր հայ պատմագրությամբ վկայված նվիրական որևէ դեպքի ու հասկացության վավերականությունը, կամ էլ անվավեր էին անվանվում մեր պատմիչների երկերը:

Այս վավերականության հավաստումն է գլխավոր պատճառներից մեկը, որ Ալիշանը առավել մեծ տեղ է հատկացնում ներկայացվող գործերի պատմականության քննությանը, քան գեղարվեստական արժանիքներին, վեր-

17 Նույն տեղում, մասն Ա, էջ 58:

ջիններին մասին խոսելիս էլ միշտ շեշտելով, որ այդ գեղարվեստականությունն ի հաշիվ պատմականության չէ:

Ալիշանը, իրար հետ համեմատելով Եղիշեին, Փարպեցուն և Խորենացուն՝ «մեր երեք հնագույն և ոսկեդէմիկ պատմագրաց» և յուրաքանչյուրին բնորոշելով մեկ բառով, միաժամանակ ներկայացնում է պատմագրության իր ըմբռնումները՝ գրելով, որ Փարպեցին «եթէ Եղիշեի փափկությունը չունի և ոչ Խորենացույ իմաստից փայլակները, թերևս անոնցմէ աւելի յատուկ պատմաբան է, ինչ որ սովորաբար հասկանալի պատմիչ և պատմութիւն ըսելով»¹⁸: Այսպես է Ալիշանը բնութագրում Ե դարի երեք գլխավոր պատմիչներին՝ շեշտելով Եղիշեի պատմության հուզական նրբությունը, Խորենացու խոհականությունը և պատմական իրադարձությունները հանգամանորեն նկարագրելու Փարպեցու ձգտումը:

1847 թ. «Բազմավեպում» լույս տեսած «Մովսէս Խորենացին և իր Հայոց պատմութիւնը» հոդվածում Պատմահորը անվանում է Հայաստանի «երկու հազար տարուան հիւսած ուսումնական պսակի ամէնէն պայծառ ծաղիկն»¹⁹:

«Իրեն լայն ճակատին վրա ճառագայթած Երողոտի, Հոմերոսի, Պլատոնի հանձարը և Երեմիայի լույսը»²⁰ խոսքերով Ալիշանը ցանկանում է ասել, որ քննական մոտեցմամբ Պատմահայրը հետևել է Հերոդոտին, գեղարվեստականության առումով հայոց պատմությունը շարադրել է Հոմերոսի նման, որպես հերոսական դյուցազներգություն, փիլիսոփայական աշխարհայացքով հետևել է Պլատոնին և Մատյանը ավարտել ողբով՝ Երեմիա մարգարեի նման:

Հաճախ քննականությունն ու ժխտումը իրար խառնող եվրոպական բանասիրությունը Խորենացուն դարձրել էր իր գլխավոր թիրախներից մեկը: Ստեփանոս Մալխասյանցի դիպուկ բնորոշմամբ՝ «բանասերներն աշխատում էին մեկը մյուսին գերազանցել իրենց ներկացուցիչ և բացասական վերաբերմունքով դեպի հեղինակն ու նրա գործը, կարծես մրցանակ էր նշանակված ամենաանպատ քննադատության համար»²¹:

Ժամանակակիցների վկայությամբ՝ նման ժխտողական վերաբերմունքը մեծ վիշտ էր պատճառում ծերունագարդ գիտնականին: Ինչպես գրում է Մխիթարյան միաբանության հայրերից Հովհաննես Թորոսյանը՝ «Չարաչար կվիրավորվեր ան այն նորամուտ քննադատությանց հարձակումներեն, որոնք կխլեին մեզմե մեր ազգային պարծանքները, որոնց ինքը ջերմ պաշտպան էր: Ան ոճիր կհամարեր Խորենացվո գոյությունը Ե դարեն տանիլ է կամ Ը դար»²²:

18 Հայաստանում, մասն Ա, էջ 61:

19 «Բազմավեպ», 1847, հմր. 10, էջ 150:

20 Նույն տեղում, էջ 155:

21 **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմություն, աշխտ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1961, էջ 3:

22 Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 110:

Այս պատճառով էլ «Հայապատումի» համապատասխան հոդվածը Ալիշանը սկսում է դառնությանը լի խոսքերով, թե արդեն երկու դար է, ինչ օտարները և նրանց միացած մեր շատ ազգայիններ քննադատում են Պատմահորը՝ «աւելի հերքելով, պախարակելով, անարգելով և իբր ոչնչացնելով պատմիչին հազարամեայ համբաւը», հինգերորդ դարից «գլորում են» մինչև Թ դար²³: Ըստ Ալիշանի՝ «Մեր ամէն պատմչաց հիւմն է նա է»²⁴, և դեպի վերին դարերը տեղաշարժելու դեպքում կփյուզվեր ողջ հայ պատմագրության ընդհանուր համակարգը: Այսինքն՝ Խորենացու վավերականության հարցը Ալիշանի համար դուրս է գալիս խորենացիագիտության շրջանակից՝ վերածվելով հայ մատենագրության կողմից սրբագործված և ազգային հպարտություն դարձած արժեքների պաշտպանության:

Ալիշանի համոզմամբ Խորենացու գործի բուն ոգին վկայում է, որ այն կարող էր գրվել միայն 5-րդ դարում ծավալված ընդհանուր գրական շարժման ընթացքում, երբ վառ էր նաև հիշողությունը նոր ընկած Արշակունյաց թագավորության հանդեպ, և ոչ թե հայոց պետականության անկումից երկու և ավելի դարեր անց: Բանաստեղծ-գիտնականի համար հարազատ ժողովրդի պատմությունը գրող հեղինակը դեպքերը անհույզ շարադրանքով ներկայացնողը չէ, այլ իր ապրած ժամանակի շունչը պատմությանը խառնողը: Այս պատճառով էլ Խորենացուն 7-րդ դար փոխադրողներին հարց է տալիս, թե ինչպես «այն տիեզերադղորդ յեղափոխութեան ատեն»՝ նկատի ունենալով արաբական արշավանքները, իր ազգին պատահած նման դեպքերի ականատեսը «նստի և այդպէս անզգայաբար իր ազգի հին առասպելներն հիւսէ»²⁵:

Հայ մատենագրության ժամանակային տարբեր շերտերն անգամ իր ներքին զգացողությամբ տարբերակող Ալիշանը գրում էր, թե նաև «իր ոճն, հոգին և հառաչանքն հնութեան բնադրոշմն ունին»²⁶: Հառաչանքը, այսինքն՝ Պատմահոր Ողբը, արձագանքն է պետականության կորստի և իր սիրելի ուսուցիչների մահվան ու հայոց քահանայապետական աթոռի՝ Լուսավորչի տոհմի շառավիղներից զրկվելու և ոչ թե արաբական շրջանի: «Հայապատումի» երկրորդ մասում էլ «Ողբի» բարձր գեղարվեստականությամբ գեղեցիկ և սրտառու լինելն ևս մի փաստարկ է համարում Ե դարի հեղինակ լինելու, քանի որ «անհնար թուի, որ ժամանակակից չեղող մի այսպէս խորին զգացմամբ գրէ»²⁷:

Եվրոպական որոշ հետազոտողների կողմից «Հայոց պատմությունը» որպես «արևելեան մութ ազգի մը զրոյցներ» համարելը մերժելով՝ Ալիշանը

23 Տե՛ս Հայապատում, մասն Ա, էջ 52:

24 Նույն տեղում, մասն Ա, էջ 55:

25 Նույն տեղում, էջ 54:

26 Նույն տեղում:

27 Հայապատում, մասն Բ, էջ 157:

շեշտում է մի կարևոր հանգամանք. Խորենացուն քննադատող եվրոպացիները եթե վաղ շրջանի այսպիսի պատմիչ ունենային և կամ նրա շնորհիվ փրկված ազգային վիպասանության հնագույն նմուշներ, արդյո՞ք նման ցրտությամբ, այսինքն՝ սառնությամբ, վերապահությամբ կվերաբերվեին, թե՞ «եռանդեամբ և նախանձով պահեին, պաշտպանեին և պաշտեին և անհաւանից դէմ կռուեին և եթէ մեր պատմչին գրած քանի մը տողերիս չափ գտնեին, միթէ իբր սրբազան մասունք չէին պահեր»²⁸: Այս վերջին խոսքն արդեն նա ուղղում է Խորենացու վավերականությունը կասկածի ենթարկող հայ բանասերներին՝ նրբորեն ակնարկելով, որ հարկավոր է այդպես վարվել և ոչ թե կուրորեն հետևել օտարներին:

3. Հայոց պատմությունն ու Հայաստանի աշխարհագրությունը

Աշխարհագրության բնագավառում ևս Ալիշանը դարձավ հետևողն ու շարունակողը մխիթարյան ավանդույթի: Ինչպես գրում է Զ. Խանգաղյանը. «Երկու անբաժանելի գիտություններ կան. Հայաստանի Աշխարհագրությունն ու Պատմությունը, որոնք ամէնէն աւելի կը պանծացնեն երանաշնորհ Մխիթարի և իր հետեւորդներուն իմաստութիւնն ու առաքինութիւնը»²⁹:

1853 թ. լույս է տեսնում Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւնը»: Ժամանակի եվրոպական աշխարհագետների գործերի հետևողությամբ ստեղծված բանաքաղական բնույթի այս գործի նպատակն էր ընդհանուր գիտելիքներ հաղորդել հայ ընթերցողին: Ալիշանը աշխարհագրությունը համարում է մարդկային գործերի հանդիսարանը, այն տեղը, ուր գործվում են դրանք³⁰: Այսպիսով այն ավելի շատ կապվում է պատմության և բանասիրության, քան թե բուն ֆիզիկական աշխարհագրության հետ:

Այս գործում չցանկանալով Հայաստանը ներկայացնել որպես մեկ մասը օսմանյան կայսրության՝ վերջինիս տեղագրությունում երբ հասնում է Հայաստանին, դիվանագիտորեն ասում է, թե նրա մասին «փոքր մի ճոխագոյն կամիմք ճառել ի վերջոյ»³¹, որն է հատորին կցված «Տեղագիր Հայոց Մեծացր»: Մինչ բուն տեղագրությանն անցնելը շեշտում է տեղագրվող վայրերի հնությունը և պատմական հիշատակներով հարուստ լինելը: Ասում է, թե հայ ժողովուրդը քաղղեացվոց և փյունիկեցիների նման հին է, սակայն նրանց պես չի վերացել: Ի տարբերություն, սակայն, այս շրջանի ուրիշ շատ հեղինակների, որոնց ստեղծագործական ոգևորությունը և հպարտությունը խարսխված էր այս հնության վրա, Ալիշանը հաջորդ կարևոր արժանիքը

28 Նույն տեղում, էջ 55:

29 «Գեղունի», Վենետիկ, 1949, էջ 60:

30 Տե՛ս **Պատմի Ալիշան**, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 5:

31 Նույն տեղում, էջ 515:

համարում է «նորութեան ընդել և ընկալուչ» լինելը, այսինքն՝ մյուս ազգերի շարքում համընթաց գնալու ունակությունը³²:

Ալիշանի գիտական մեթոդաբանությունը պայմանավորված էր Աստվածաշնչից բխող կրոնական ըմբռնումներով: Նման մեթոդաբանությունը եթե «Քաղաքական աշխարհագրություն»-ում հանգում էր բնագիտության տարբեր հարցերը Աստվածաշնչով բացատրելուն, ապա «Տեղագիր»-ում վերածվում էր Հայոց աշխարհի հնության հավաստմանը: Ալիշանը գրքի համար բնաբան է ընտրել Սամվել Սկևռացու հետևյալ տողերը. «Հայրենի և պարծելի բնիկ Հայկազանց աշխարհին, տունն Արևելից, որ առաջին է մասն և գլուխ օրինակ իմն բոլոր աշխարհի... յորում դադարեալ տապանն Նոյի և բացեալ՝ անտի դարձեալ սերեցաւ մարդկային զարմ»³³:

Ալիշանը միայն որպես Հայաստանը պանծացնող մի վկայություն չի ընտրել այս տողերը, այլ այն նրա գիտական մեթոդաբանությունը և պատմահայեցողությունը պայմանավորող աշխարհայացքն էր՝ ձևավորված Մխիթարյան միջավայրում, ուր որոշակի համակարգման ենթարկվեց դարերի ընթացքում հայ պատմագրության կողմից նվիրագործված և սրբագործված այն ըմբռնումը, թե դրախտը Հայաստանում է գտնվել, և այնտեղից է կյանքը սկզբնավորվել ու երկրորդ անգամ նորոգվել ջրհեղեղից հետո:

Մխիթար Աբբահոր մասնակցությամբ կազմված «Բառգիրք Հայկազեան լեզուի» երկրորդ հատորում դրախտի մասին ասվում է. «Եղեմն ասի այն գաւառն Հայոց, որ այժմ Կորդուաց աշխարհ կոչի»³⁴: Այս միտքը գրքից գիրք էր փոխանցվում մխիթարյան աշխարհագրություններում և պատմություններում՝ հայ ժողովրդի պատմության սկիզբը նույնացնելով արարչագործությանը սկզբնավորված համաշխարհային պատմության հետ: Ինչպես Ղուկաս Ինձիճյանն է գրում. «Պատմութիւն առաջին բնակութեան Հայաստանեայց սկսանի յառաջին բնակութենէ համօրէն մարդկային ազգի»³⁵:

Միջնադարյան մատենագրական վկայությունների վրա խարսխված այս տեսությունը համապատասխան թվային հաշվարկներով որոշակի տարածական-ժամանակագրական համակարգի մեջ դրեց Միքայել Չամչյանը՝ առաջնորդվելով «Ծննդոց գրքի» և ազգային մատենագրության տվյալների համադրմամբ: «Դրախտ Հայաստանի» անվանված և ազգային յուրօրինակ գաղափարաբանության վերածված այս տեսությունը աշխարհասփյուռ հայության մի քանի սերունդների ներարկեց այն գաղափարը, որ հայ ժողովուրդը մի առաքելություն ունի՝ վերատիրելու իր հայրենիքին՝ նորոգյալ աստվածատունկ դրախտին, և վերաշինելու այն: Այս գաղափարը Վենետի-

32 Տե՛ս Ղևոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 4:

33 Նույն տեղում, էջ 6:

34 Բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, Վենետիկ, 1769, էջ 76:

35 Ղուկաս Ինձիճեան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Ա, Վենետիկ, 1835, էջ 244:

կից տարածվելու և հասնելու էր մինչև հեռավոր Հնդկաստան, ուր 1772–1773 թթ. գրված «Նոր տետրակ որ կոչի Հորդորակ» գրքի հեղինակը երիտասարդությանը որպես կոչ պատգամելու էր.

**Ու մուտք գործեք զվարձալի և բերկրալի Արարատյան դրախտը
մեր եղեմակերպ,
Քանզի շատերն են վկայում, որ դրախտը աստվածային եղել է
մեր հայրենիքում³⁶:**

Սակայն թե՛ որպես գիտական համակարգ և թե՛ որպես ազգային գաղափարաբանություն այս տեսությունը ավարտուն ամբողջության հասցրեց Ղևոնդ Ալիշանը: Հակոբ Օշականի բնորոշմամբ՝ «Մխիթարեան մտայնութիւնը ոչ ոքի մօտ այդքան պայծառ է մարմնացած, որքան ճիղճ մարմնով, բայց շքեղ հոգիով այն աբբային վրայ, որուն անունն է Ալիշան»³⁷: Երկու էական տարբերություն կար, սակայն, Ալիշանի և նախորդների միջև: **Նախ**՝ որ նա առանձնակի գեղարվեստականություն և հայրենասիրական հզոր լիցք հաղորդեց այս գաղափարին, աստվածաշնչային շրջանակից ամբողջապես փոխադրելով Հայոց աշխարհ, որն իրենում կենդանիորեն կրում էր դրախտի հուշը: **Երկրորդ**՝ ի տարբերություն նախորդների, որպես հավաստումն դրախտի՝ Հայաստանում գտնվելուն, Ալիշանը չբավականացավ միայն Աստվածաշնչի և ընդհանրական եկեղեցու հայրերի խոսքերի վկայակոչմամբ, այլ դիմեց ժամանակի բնագիտության՝ երկրաբանության, բուսաբանության, հնէաբանության և մյուս գիտակարգերի ընձեռած տվյալներին, որը բացատրվում է հետևյալ հանգամանքով: 18-րդ դարի վերջից և հատկապես 19-րդ դարի սկզբից եվրոպական գիտությունը, կասկածի ենթարկելով Խորենացու և մի շարք այլ պատմիչների վավերականությունն ու ժամանակը, համանման մոտեցում ցուցաբերեց և հայ պատմագրության կողմից նվիրագործված հիշյալ ըմբռումների հանդեպ: Բնագիտական տվյալների վկայակոչմամբ Ալիշանը նախ՝ ցանկանում էր լրացուցիչ փաստարկներով հավաստել այս տեսության վավերականությունը, ինչպես նաև ցույց տալ, որ ժամանակի գիտությունը ոչ թե մերժում, այլ հավաստում է այն:

Համանման փորձեր ձեռնարկել են նաև Մխիթարյանները՝ Մխիթար Սեբաստացուց մինչև Ղուկաս Ինձիճյան, սակայն այն հանգել է մատենագրական տարբեր աղբյուրների վկայակոչմամբ դրախտի հետ կապվածությունը Հայաստանի բնական գեղեցկությամբ և հարստությամբ հավաստելուն: Այս–

36 «Նոր տետրակ որ կոչի հորդորակ», թարգմանությունը և առաջաբանը Պ. Խաչատրյանի, Եր, 1991, էջ 42: Բնագրային համադրմամբ Պ. Խաչատրյանը նաև ցույց է տալիս, որ այս տողերի և Հայաստանի աշխարհագրությանը նվիրված վեցերորդ գլխի աղբյուրը «Բառզրքի» համապատասխան բաժինն է:

37 **Յակոբ Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականություն, հատ. 2, Երուսաղեմ, 1953, էջ 174:

պես՝ Մխիթար Սեբաստացին «Հայկազեան բառարան»-ում գրում է, թե դրախտը Կորդվաց աշխարհում է գտնվել, որովհետև այնտեղից են բխում դրախտի չորս գետերը և այնտեղ է հավաքվում գազպեն, ինչպես նաև «վասն ազնուության և պողաբերության գաւառիս այտորիկ և վասն բարեխառնության օղոցն և բարեյարմարության դրից տեղոյն և գուարձութեան ասեն բազում բանս գովեստից»³⁸: Նույն ձևով Ինժինյանը «Յարմարութիւն դրից Հայաստան աշխարհիս» գլխում այդ հարմարությունը հանգեցնում է այն մտքին, որ Հայաստանում պետք է «տեսանել նշանս յարմարս իբր յաւերակաց անտի դրախտին մնացեալս»³⁹:

Ալիշանը, սակայն, իր տեսությունը խարսխում է նաև ժամանակի գիտության տվյալների վրա: Առաջին նման փորձը 1843 թ. «Բազմավեպ»-ում հրատարակված «Ադամայ դրախտին տեղը» հոդվածն է⁴⁰: Երկրաբանական տեսանկյունից է ջրհեղեղին անդրադառնում «Հողերու դասաւորութիւն» հոդվածում՝ երկրակազմական շերտերը և նրանց կրած փոփոխությունները կապելով ջրհեղեղի հետ, որով վեց դասի բաժանվող հողային շերտը դասակարգում է ըստ հետջրհեղեղյան և նախաջրհեղեղյան շրջանի⁴¹: Այս տեսությունը արդեն շեշտված ազգային ուղղվածությամբ գտնում ենք «Հուշիկներ»-ում: Մինչ վերջինիս հրատարակությունը, դեռևս «Տեղագիր Հայոց Մեծաց»-ում Ալիշանը գրում էր. «Տիեզերահոչակեալ ջրհեղեղն, անժխտական վկայութեամբ Գրոց Սրբոց՝ ոչ ուրեք այնպէս քաջիկ հաւաստի ողողեալ գերկիր, որպէս զՀայս»⁴²:

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ը, եթե Հայաստանի համառոտ տեղագրությունն էր, ապա «Հուշիկներ»-ի առաջին հատորի «Բնախօսութիւն Հայաստան աշխարհի» դրվագը՝ Հայաստանի ընդհանուր բնական և աշխարհագրական նկարագրությունը, և այս ամենը՝ ներկայացված Հայոց Նահապետի բանաստեղծական գրչով ու «դրախտ Հայաստանի» տեսությունը հավաստել ցանկացող գիտնականի ձգտմամբ: Այդ հավաստմանն է ծառայում Հայաստանի երկրաբանական շերտերի քննությունը: Բաժին առ բաժին ներկայացնելով Հայաստանի բնագրությունը՝ «Բնախօսութեան» վերջում իբրև ընդհանրացում ասում է. «Եդեմայ հետքը գտնելու ապահովագոյն ձամբան է Հայաստան»⁴³:

1881 թվականից իրար հաջորդող տեղագրական չորս հատորների լույս ընծայումը միայն նախորդ շրջանի նախապատրաստական աշխատանքով չէր պայմանավորված, այլ թելադրված էր այդ տասնամյակի առաջադրած գրական-հասարակական խնդիրներով: Այն շրջադարձ էր դեպի անցյալն ու

38 Բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, Վենետիկ, 1769, էջ 76:

39 Դուկաս Ինժինյան, Հնախօսութիւն, էջ 269:

40 Տե՛ս «Բազմավեպ», 1843, էջ 268-270:

41 Տե՛ս «Բազմավեպ», 1844, էջ 33-35:

42 Տե՛ս Դևոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 12:

43 Դևոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1869, էջ 70:

պատմությունը և բացատրվում էր երկու հանգամանքով. **առաջինը** գնալով խստացող գրաքննությունն էր, որը արևելահայ ու արևմտահայ մտավորականներին պարտադրում էր ասելիքը, ազգային ձգտումներն ու իղձերը արտահայտել այլաբանորեն: Վերջինիս դասական օրինակն են Բաճաբու պատմավեպերը և հերոսական անցյալը ոգեկոչող «Խամսայի մելիքություններն» ու Սյունյաց աշխարհին նվիրված ուղեգրությունները:

Նման ձգտման **երկրորդ** պատճառը Բեռլինի վեհաժողովից հետո ստեղծված վիճակն էր, երբ մի կողմից Եվրոպան դավաճանեց հայերին, իսկ մյուս կողմից թուրքական իշխանություններն էին փորձում ժխտել Հայաստանի գոյությունը՝ որպես առանձին պատմական-աշխարհագրական միավոր: Այս պայմաններում պատմությանը դիմելը դառնում էր միջոց թե՛ քրիստոնյա տերությունների դեմ ուղղված բողոքն ու հիասթափությունը արտահայտելու և թե՛ հայոց երբեմնի պետականությունը հավաստելու: Բաճաբին այն, ինչ չէր կարող ուղղակիորեն ասել ժամանակի քրիստոնյա տերություններին, իր պատմական հերոսների միջոցով ուղղում էր «նենգավոր Բյուզանդիոնին»:

Ինչպես Մխիթարյանները, հավատարիմ Սեբաստացու պատգամին, քարտեզագրական մի ողջ դպրոց էին ստեղծելու և Օսմանյան կայսրության մի մասում բացահայտելու պատմական Հայաստանը, նույն կերպ էր վարվելու և Ալիշանը՝ ավերակ առ ավերակ վերակենդանացնելով անցյալի երբեմնի փառքը:

Ալիշանի տեղագրական շարքը սկսվեց 1881 թ. հրատարակված «Շիրակ»-ով, որին նախապատվություն տալը դարձյալ պայմանավորված էր պատմական և գրական ավանդույթով: Դեռևս 1869 թ. «Բազմավէպ»-ում հրատարակված «Նշմարք և նշխարք»-ում նա գրում էր, թե Հայաստանի գավառների մեջ «հազիւ երկու կամ երեք հատ գտուիս հաւասար կամ մօտիկ Շիրակայ՝ ազգային յիշատակօք լի»⁴⁴: «Շիրակ»-ի առաջաբանում էլ ասում է, թե առաջինը ընտրում է «Շիրակ, գաւառ Այրարատայ, վասն բազմակերպ նոր եւ հին յիշատակաց իւրոց»⁴⁵:

Շիրակը տեղագրելիս նա առաջնորդվում է գավառի պատմական բաժանմամբ և բնական դիրքով և ոչ թե ռուս-թուրքական պատերազմի առաջ բերած մասնատվածությամբ: Ալիշանի գեղագիտական ըմբռնումներում բնությունը եթե կապվում է գեղեցկության և ներդաշնակության հետ՝ կրելով նաև հիշողությունը աստվածային արարչագործության, ապա Անիի և ընդհանրապես հայկական ճարտարապետության՝ վայր խոնարհված կոթողներին նվիրված վերլուծություններում, ի դեմս թփերի և վայրի մացառների, այն պահպանում, կրում է պատմական դեպքերի արձագանքը: Ավեր-

44 «Բազմավէպ», 1869, N 12, էջ 354:

45 **Ղևոնդ Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ Ա:

վող կոթողների ու մշտապես բնության պատկերով ստեղծվում է անցյալի ու ներկայի հակադրությունը:

«Նշմարք հայկականք»-ի զգալի մասը նվիրված է Անիին, որն է «Թագուհի աներակաց աներակացեալն Հայաստանի»⁴⁶: Անիի ծաղկման և կործանման հետ կապված բոլոր հարցերը Ալիշանը, քննելով որպես գիտնական, եզրակացությունները դարձյալ կատարում է գեղարվեստի լեզվով, իր իսկ օգտագործած սկզբնաղբյուրների ոճով: Նա ներքին մի խորհուրդ և վերին մի ազդեցություն է գտնում այն իրողությունում, որ պատմական վկայություններով մեր այնքան հարուստ միջնադարյան մատենագրության մեջ որևէ հիշատակություն չկա քաղաքի անկման մասին, որը «աւելի կը գարմացնէ աստուածախառն սոսկմամբ մը՝ քան Բաբելոնի և Նինուէի մթին դարերն և սեւ օրերն...»⁴⁷: Այս խոսքերով Ալիշանը անուղղակիորեն ակնարկում է քաղաքի՝ անեծքով կործանվելու մասին ժողովրդական ավանդությունը, որի համար էլ համեմատում է Նինվեի և Բաբելոնի հետ, որոնց վրա մարգարեների անեծքն էր ծանրացել:

Անիի վերականգնման ընդհանուր հույսը նոր իմաստ և խորհուրդ է ստանում «Շիրակ»-ում: Նկատելի տարբերություն կա «Նշմարքի» և «Շիրակի» միջև: «Նշմարք»-ում Ալիշանը այրված սրտով գրում է ավերակների մասին: Քաղաքի վերականգնման հույսն իսկ խարսխված է միջնադարից եկող միստիկ հավատի վրա: «Շիրակում» ավերակների համար կսկծացող Ալիշանը արդեն մտածում է դրանց նորոգության մասին: Մոտեցման և հոգեվիճակների այս փոփոխությունը պայմանավորված է Անիի՝ ռուսական տիրապետության ներքո անցնելու և ողջ Արևելյան Հայաստանում կյանքի խաղաղվելու հետ⁴⁸:

Գրական առումով էլ հատկանշական է հետևյալ հանգամանքը: Եթե «Նշմարք»-ում Ալիշանը հետևում էր Լաստիվերցու և Շնորհալու ոճին և գծագրում քաղաքի կործանման մասին ժողովրդական ավանդություններին համահունչ պատկերներ, ապա «Շիրակ»-ում գերիշխում են գլխավորապես Աբովյանի շունչն ու ոգին: «Վերք Հայաստանին», որն անվանում է «իբրև հուսկ հայրենական յիշատակ Անույ»⁴⁹, քաղաքական ծրագիր է նաև Ալիշանի համար:

«Միսուանն» է տեղագրական չորս հատորներից առավել գեղարվեստականը և պատմականը: Երկրի տեղագրությունն այստեղ այն հարթությունն է, որի վրա բարձրանում են կիլիկյան բերդերն ու ամրոցները: «Միսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լևոն Մեծագործ» վերնագրում ներկայացված են գիրքը կերպավորող երեք շերտերը՝ մատենագրութ-

46 Ղևոնդ Ալիշան, Նշմարք հայկականք, Բ պրակ, Վենետիկ, 1870, էջ 33:

47 Նույն տեղում, էջ 34:

48 Տե՛ս Ղևոնդ Ալիշան, Շիրակ, էջ 109:

49 Նույն տեղում, էջ 104:

յուն, տեղագրություն և պատմագրություն: Բացատրելով, թե հատորը ինչու է «Սիսուան» անվանել, Ալիշանը վկայակոչում է Գրիգոր Տղայի հետևյալ տողերը.

**Ապա ընդ լեառն Տարոսին՝
Մըտին յաշխարհըն Սիսուանին⁵⁰:**

Ալիշանը, զգալով գեղարվեստական շնչով պատված պատմական շարադրանքի գերակայությունը, գրում է. «Տեղագրութեան Կիլիկիոյ էր աստանոր մեզ նպատակ և ոչ պատմութեան», սակայն ինքը չի կարողանում զատել «զպատմութիւն յաշխարհագրութենէ» ոչ միայն գիտական նկատառումներով, այլև ժամանակի իրավիճակով բացատրելով, քանի որ ամայացող երկրում ազգային պատմությունը անտեսել, կնշանակեր «զլերանց լոկ եւ զժայռից ճառս ճառել»⁵¹: Տարբեր վայրերի ավերակ վիճակը և նրանց մասին հիշատակությունների պակասը Ալիշանը բնորոշում է «մեռելութիւն կրկնամեռ» արտահայտությամբ: Նրա նպատակը, սակայն, ընթերցողի սիրտը միայն վշտով և ցավով պատելը չէր, այլև ազգային հպարտություն ներշնչելը, թե հայկական լեռնաշխարհում, մյուս ազգերի միջև, նրանցից առաջ արդեն քառասուն դարեր բնակվում են հայերը:

Ավերակների վերածված վանքերի և եկեղեցիների նկարագրությունում գերիշխող մտայլ շեշտը և օսմանյան գրաքննությամբ պայմանավորված զգուշավորությունը լիովին ցրվում են, երբ հեղինակը հասնում է Զեյթունին, որի տեղագրական նկարագրությունն իսկ պատշաճ է հայոց արծվաբույնի բնակիչների ազատաբաղձությանը, թե այս «երկիր լեռնավայր է բազմակոհակ, անձուկ և դժուարակալի ձորակօք»⁵²: Երկրի բնական դիրքի և հարըստության ու մասնավորապես երկաթահանքերի մասին խոսելիս էլ զեյթունցիների գինվածությունն է ակնարկում՝ գրելով. «Այս մետաղ ի վաղուց հետէ առիթ է վաստակոյ, պարէնի, ժրութեան եւ չափաւոր ազատութեան՝ բնակչաց երկրին»⁵³, ակնարկելով, թե այս պատճառով է, որ ընդհանուր ավերների և այլայլումների մեջ Զեյթունը շարունակեց ապրել ներքին ինքնավարությամբ:

Եթե հաշվի առնենք, որ «Սիսուանը» ամբողջացել է 1860–1880–ական թթ., ապա Զեյթունին նվիրված բաժինը կարելի է անվանել յուրատեսակ տեղագրական–գեղարվեստական արձագանքը 1862 թ. Զեյթունի ապստամբության և վերջինիս նվիրված գործերի: Ազգային այն հույսերն ու ակնկալիքները, որոնք նախորդ գործերում կապվում էին Անիի հետ, «Սիսուան»-ում էլ որպես գեղարվեստական պատկերներ վերաբերում են Զեյթունին:

50 **Ղևոնդ Ալիշան**, Սիսուան, Կենետիկ, 1885, էջ 59:

51 Նույն տեղում, էջ Ժ:

52 Նույն տեղում, էջ 180:

53 Նույն տեղում, էջ 183:

«Միսունանը» իր հղացմամբ, անցյալին դիմելու ոճով և նպատակներով կապվում է նույն ժամանակաշրջանի գրական ընթացքի հետ: Ինչպես արևելահայ ու արևմտահայ գրողներն էին իրենց ասելիքը սքողում պատմական շղարշով՝ պատմական հերոսների շուրթերով արտահայտելով իրենց խոսքը, նույնը կատարում է Ալիշանը՝ Կիլիկիայի հայկական թագավորության միջոցով հայոց պետականության գաղափարի վերարծարծումը պատելով տեղագրական նկարագրությամբ: Գրելով «Թէպէտ մարթ էր կոչել պատշաճապէս և Կիլիկիա Հայք կամ **Հայ Կիլիկիա**, որպէս և գտանի իսկ կոչեցեալ ի հնուց ժամանակին՝ **Արմենոգիլիգիա**»⁵⁴ և ընդգծված բառերը ներկայացնելով այլ շարվածքով, ընթերցողին հիշեցնում է, թե այն տարածքը, որը օսմանյան մի քանի կուսակալությունների միջև էր բաժանված և դարձել էր կիսակործան, ժամանակին հայկական է եղել և այդպիսին է ճանաչվել աշխարհի կողմից:

«Այրարատի» գրությունը Ալիշանին, ստեղծագործական տքնանքից բացի, նաև խորին մտահոգություն էր պատճառում, քանի որ մինչ այդ արգելվել էր «Միսունանի» մուտքը Օսմանյան կայսրություն: 1886 թ. ռուս նշանավոր արվեստաբան Վլ. Ստասովին ուղղված նամակում նա գրում է, թե այն «հենց նոր արգելքի տակ է դրել թուրքական կառավարությունը: Ինչպիսի տարբերություն դրանց և Ձեր կայսրի ցուցաբերած խրախուսանքի միջև»⁵⁵:

Այնուամենայնիվ, Ալիշանը այն մտավախությունն ուներ, որ «Այրարատը» ևս կարգելվի ոչ միայն թուրքական, այլև ռուսական իշխանությունների կողմից: Այս նույն մտավախությունն ունեին և ժամանակի հայ մտավորականները: Այսպես՝ Կարապետ Կոստանյանին ուղղված նամակում, ասես ցանկանալով փարատել այս մտահոգությունները, նա գրում է. «Կը վախեցնէք զիս Այրարատայ մտից համար ի Ռուսաստան: Ես կը յուսամ, որ ինչպէս «Միսունան» մտաւ՝ սա այլ մտնէ. իրաւ «Միսունան» ռուս հողի վրայ չէր խօսէր, ինչպէս «Այրարատն», սակայն սա այլ կարծեմ թէ տէրութեան հակառակ բան չէ խօսած»⁵⁶:

«Այրարատը» Ալիշանը նվիրել է գրքի տպագրությանը համընկած, 1888 թվականով սկզբնավորված Հայկա չորրորդ շրջանին: Այս ձոնումը միայն ժամանակային պարզ համընկնումով չէր պայմանավորված, այլ ուներ ազգային խորին ենթատեքստ՝ այս հատորը կապելով «Հուշիկներ»-ին, ուր առանձին մեկ դրվագ է նվիրված Հայկա շրջանին: Ըստ Ալիշանի տոմարական հաշվումների՝ այն սկսվել է 2492 թ. Քրիստոսի ծննդից առաջ: Նման հնությունից բացի՝ այն Ալիշանի համար ունի ևս երկու նվիրական խորհուրդ: Առաջին՝ կապվելով Բելի դեմ Հայկի ընդվզմանը՝ խորհրդանշում է նաև հայ ժողովր-

54 Նույն տեղում, էջ 53:

55 **Ղևոնդ Ալիշան**, Նամակներ, աշխտ. Ս. Շտիկյանի, Եր., 1969, էջ 257:

56 Նույն տեղում, էջ 138:

դի ազատատենչությունը, և երկրորդ՝ սկսվող չորրորդ շրջանի հետ է կապում նորոգությունը ազգային իդձերի ու հայկյան ընդվզումի⁵⁷:

1880-ական թթ., երբ այնքան մեծ էր հայկական հարցի լուծման ակնկալությունը, Ալիշանը գիրքը նվիրում է Հայկա սկսվող չորրորդ շրջանին: «Այրարատ»-ում գերիշխում են, նրա ընթոնմամբ, Հայկյան տոմարին բնորոշ հետևյալ երեք հատկանիշները՝ խորին հնություն, այդ հնությամբ և արժանահիշատակ գործերով հպարտություն անցյալի հանդեպ և հույս ապագա նորոգության: Հնության այս գաղափարի ընդգծմամբ է սկսվում գրքի առաջին էջի առաջին նախադասությունը. «Այրարատ անդրանիկ է աշխարհագրական անուանց երկրի վերածնելոյ մահառիթ և կենսառիթ մկրտութեամբ ջրիեղեղին»⁵⁸:

1893 թ. տպագրված «Սիսականը», ի տարբերություն նախորդ երեք գործերի, ունի առավելապես տեղագրական բնույթ, որն Ալիշանի իսկ խոստովանությամբ բացատրվում է երկու հանգամանքով: Տեսնելով, որ գնալով մեծանում են հարուցվող արգելքները թուրքական իշխանությունների կողմից, և վախենալով, որ իր հատորներով կվտանգի արևմտահայությանը, համիդյան ջարդերի նախօրեին Ալիշանը հարկադրված աշխատում է զսպել իր զգացմունքներն ու հայրենասիրական պոռթկումները: Ինչպես առաջաբանում է գրում. «Զի և հարկ ժամանակիս զգուշութիւն պահանջէ և լռութիւն»⁵⁹:

Կյանքի մայրամուտին մոտեցող Ալիշանը, նաև կանխագգալով, որ իր ազգային երազանքները դժվար թե ի կատար ածվեն, առավել է տրվում հոգևոր-կրոնական մտածումներին և ամփոփվում իր մեջ: Նշված երկու պատճառները զգալապես ազդել են «Սիսականի» ընդհանուր ուղղվածության վրա: Եթե նախորդ գրքերը նա առաջին հերթին ուղղված է ազգակիցներին՝ նրանց հոգում բորբոքելու սերը հայրենի երկրի և նրա հիշատակների հանդեպ, ապա այստեղ հատուկ շեշտում է, որ այս գործը «ընծայեմ ոչ սոսկ հայրենասիրաց՝ այլ մանաւանդ և բանասիրաց»⁶⁰:

Սյունեցիների օրինակով Ալիշանը մի վերջին անգամ ընդգծում է տարբեր առիթներով հայտնած այն միտքը, թե ազատությունն է անխաթար պահում մարդկային հոգին, որի կորուստը աղձատում է նաև մարդու հոգեբանությունը: Սյունիքում, ըստ նրա, ազգային նկարագիրը անխաթար պահպանվել է՝ շնորհիվ «ազատասէր բուսոյ բարուց բնակչացն, և զոյգ նմին կորովոյ քաջութեան»⁶¹, վերջինս էլ պայմանավորելով միջավայրով՝ «բովանդակ երկիրն Սիւնեաց լեռնակոհակ է»⁶²: Քիչ անց վերստին նույն միտքն է

57 Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Յուշիկք, հտ. Ա, էջ 97:

58 **Ղևոնդ Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 1:

59 **Ղևոնդ Ալիշան**, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ Ե:

60 Նույն տեղում, էջ Է:

61 Նույն տեղում, էջ Զ:

62 Նույն տեղում, էջ Ը:

շեշտվում, թե սյունեցիների բնավորության ձևավորմանը մեծապես նպաստել է բնությունը՝ «ազատաբարոյութեան տածիչս»⁶³:

Ինչպես Սյունյաց աշխարհի, այնպես էլ Արցախի հանդեպ Ալիշանի վերաբերմունքը դարձյալ պայմանավորված էր մխիթարյան ավանդությամբ: Հատկանշական է, որ ԺԷ դարը փակվեց 1699 թ. Սյունյաց աշխարհում Իսրայել Օրու մասնակցությամբ գումարված Անգեղակոթի ժողովով, որը հիմք դրեց ազգային ազատագրական պայքարի հստակ կողմնորոշման, իսկ հեռավոր Սեբաստիայից Կ. Պոլիս հասած Մխիթարը բացվող դարասկզբին՝ 1701 թ., հիմնադրեց իր հռչակավոր միաբանությունը: Խորհրդանշական է, որ իրար հաջորդող երկու տարիների ընթացքում դրվեցին զինական և մշակութային պայքարի հիմքերը: Ինչպես գրում է մխիթարյան հայրերից Սամվել Արամյանը. «Հայաստանի լեռներէն կը ժայթքէին գոյգ հրաբուխներ, որոնց ջերմութիւնը պիտի հրավառէր հայ միտքն ու սիրտը և ուժ պիտի տար հայ բազուկին՝ ցնցելու բռնակալութեան ու ատելութեան լուծը»⁶⁴:

Մխիթարյանները մեծ հույսերով էին հետևում Սյունիքում և Արցախում սկզբնավորված շարժումներին: Հրատարակված դիվանական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Հայաստանի գավառներում շրջագայող միաբանության անդամները Ս. Ղազար գրած իրենց նամակներում շարունակ մանրամասներ էին հաղորդում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ինչպես գրում է Արամյանը. «Մխիթար Աբբահայր և Ս. Ղազարի բուռ մը վանականները՝ հեռաւոր իրենց պանդխտավայրէն՝ խանդավառօրէն կը հետևեն հայրենիքի իրադարձութիւններուն՝ վերածննդի մեծ երագով»⁶⁵:

Ահա այս պատճառով էլ մխիթարյան աշխարհագրություններում և պատմություններում, Արցախի տեղագրությունից, տեղանունների ստուգաբանությունից և ընդհանուր պատմությունից բացի, առանձնակիորեն շեշտվում է ընդվզումի այս ոգին: Միքայել Չամչյանը, իր եռահատոր «Պատմություն»-ում բազմիցս անդրադառնալով Արցախին՝ երրորդ հատորի ԽԸ(48) «Յաղագս գօրանալոյ Հայոց յաշխարհն Սիւնեաց և Արցախոյ ընդդէմ օտար ազգաց» և հաջորդող գլուխներում մանրամասնորեն նկարագրում է ԺԸ դարում այնտեղ ծավալված շարժումները⁶⁶:

Ալիշանը ևս «Տեղագիր Հայոց Մեծաց»-ից մինչև «Հայապատում» տարբեր առիթներով շեշտում է, որ հայկական իշխանությունների անկումից հետո մինչև 19-րդ դարի սկիզբը միայն Արցախում և Սյունիքում մնացին «պայազատք Հայկազանց»: «Շնորհալի և պարագայ իւր»-ում էլ Խաչենի իշխանների մասին գրում է. «Բաւական ազատութեամբ պայազատէին ԺԲ և ԺԳ դարուց միջոց, և որոց սերունդք իշխանական անուամբ կան պանծանօք

63 Նույն տեղում, էջ 7:

64 Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», Կենետիկ, 1978, էջ 6:

65 Նույն տեղում, էջ 34:

66 Միքայել Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Կենետիկ 1784, էջ 784:

դեռ շատ դարեր ալ տևեցին, և ինչուան հիմա ալ թերևս գտուին ազնուական շառավիղքն»⁶⁷:

Ինչ վերաբերում է Արցախի տեղագրությանը, որը նա կատարել է Մեծ Հայքի մյուս նահանգների շրջանակում, չհասցրեց մի վերջին անգամ սրբագրել, խմբագրել ու ամբողջացնել և գլխավորը՝ հոգևոր գեղարվեստական այն շունչը հաղորդել, որը երկրի մի հատվածի տեղագրությունը վերածում էր «Սիսուանի» ու «Այրարատի»: «Արցախ» անտիպ մնացած աշխատությունը Մխիթարյանները շարունակաբար հրատարակեցին «Բազմավեպի» 1988 թ. և 1990 թթ. համարներում՝ խմբագրության կողմից գրված ծանուցման մեջ ասելով, թե վերջնականորեն խմբագրած հատորներից հետո «անտիպ թողած է յաջորդ նահանգներու տեղագրութիւնը, որոնք հաւանաբար պիտի ընդլայնէր ու նկարագարդէր՝ տպագրութեան յանձնելէ առաջ»⁶⁸:

Եթե 1860-ական թթ. Ալիշանը բողոքում էր աղբյուրների սակավությունից, ապա 1880-ական թթ. արդեն ասում էր, որ նոր հրատարակությունները ժամանակ չունի համադրելու իր գրածների հետ, իսկ առանց նման աշխատանքի տպագրելն էլ հնացած և անարժեք է համարում: Սակայն եթե պատճառը միայն նման գիտական-հետազոտական բնույթի դժվարությունները լինեին, ապա Ալիշանը իր առասպելական աշխատասիրությամբ և համադրման ունակությամբ կամբողջացներ ևս մի քանի նահանգներ: «Սիսական»-ին նոր հատորների չհաջորդելը, կարծում ենք, ավելի խոր ազգային-հասարակական և գրական ընթացքով պայմանավորված պատճառներ ուներ: Գլխավորը թուրքական իշխանությունների այն մեղադրանքներն էին, թե Ալիշանի հատորները անհնազանդության են մղում արևմտահայությանը: Թուրքական իշխանությունները անգամ դրանք պատճառներից մեկը համարեցին 1890-ական թթ. հայկական ջարդերի, որը խոր վիշտ պատճառեց ծերունազարդ գիտնականին: Ժամանակակիցների վկայությամբ նա, ցնցված նման մեղադրանքներից, շարունակ առանձնացած լալիս էր:

Տեղագրական նոր հատորները չհրատարակելը, հիշյալ ազգային քաղաքական և գիտական-հետազոտական պատճառներից բացի, բացատրվում է նաև 19-րդ դարի վերջի հայ գրականության ընթացքով: Եթե 1870-ական թթ. հայկական հարցի արծարծումը գրական ոգևորության ալիք առաջ բերեց, որը, անցյալին դիմելով, գրականության շրջանակներում փորձում էր հավաստել իր հայրենիքում անկախ պետականություն ունենալու հայ ժողովրդի պատմական իրավունքները, ապա 1880-ական թթ. առաջ եկած հուսախաբությամբ իջավ պատմավեպերի և պատմականության ալիքը: Միաժամանակ 1890-ական թթ. վերջնականորեն արմատավորվեց ռեալիզմի գրական ուղղությունը, և 19-րդ դարի երկրորդ կեսի ժամանակակյան գրա-

67 Ղևոնդ Ալիշան, Ընորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 105:

68 Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1988, N 1-4, էջ 228:

կանության շրջանակում իմաստավորվող տեղագրական այս չորս հատորներին այլևս չհաջորդեցին նորերը: Պակաս դեր չխաղաց նաև այն հանգամանքը, որ ազգային երազանքների խորտակումից հետո՝ 1890-ական թթ. կեսերից, Ալիշանը մեծապես տրվեց կրոնական ապրումներին:

Ալիշանի տեղագրական հատորները վկայում են, որ պատմությունը նրա համար տեղայնանում է աշխարհագրական տարածքով, և տեղագրությունն էլ իր հերթին կրում է պատմության հիշողությունը: Աշխարհագրական տարածքը հայրենիք է դառնում պատմական հիշատակներով:

4. Հայոց պատմության բանաստեղծական մեկնաբանությունը

Ինչպես Ալիշանի հայագիտական ուսումնասիրություններում, անգամ բնագրագիտական ամենանրբին քննություններում իսկ նկատելի է բանաստեղծական շունչը և դրոշմը, այնպես էլ նրա գեղարվեստական գործերում միշտ ներկա է բանասերը, գիտնականը: Նման ներկայությունն առավել ցայտուն է զգացվում «Նահապետի երգեր»-ում:

Ալիշանը այս շարքի բանաստեղծությունները վերագրել է 17-րդ դարում որպես թե Շահ Աբասի ժամանակ ապրած Նահապետ անունով հեղինակին՝ արձագանքելով մինչ այդ ողջ Եվրոպայով անցած օսսիանականության ալիքին: Շոտլանդացի Զեյմս Մակֆերսոնը (1770–1835 թթ.) երիտասարդության տարիներին շոտլանդերեն գրած իր ստեղծագործությունները գրական նմանակության հնարին դիմելով՝ վերագրում է որպես թե երրորդ դարում ապրած իր հայրենակից Օսսիանին: Մակֆերսոնի գրական այդ վերագրումները ժամանակակիցները համեմատեցին և անգամ վեր դասեցին Հոմերոսի ստեղծագործություններից⁶⁹:

Ինչպես հայկական կլասիցիզմը անտիկ թեմաները փոխարինեց հայկական հերոսական անցյալով, այնպես էլ Ալիշանի ստեղծագործական քուրայում Հյուսիսային Շոտլանդիայի ծեր բարդ Օսսիանը գրական նույն նմանակությամբ դարձավ Հայոց Նահապետ՝ համապատասխան ազգային դրոշմ հաղորդելով նաև օսսիանականությունը բնորոշող առանձնահատկություններին:

Ալիշանը իր պատմական թեմաներով չափածո ստեղծագործությունները ի մի է բերել «Նուագք» խորագրված շարքի երրորդ՝ «Հայրունի» հատորում, որի վերնագիրն իսկ հուշում է, որ նրանում տեղ են գտել հայրենիքին նվիրված ստեղծագործությունները:

69 См и История английской литературы, т. I, М. 1945, с. 577-580.

Հատորի բանաստեղծությունների թեմատիկան լավագույնս ցույց է տալիս Ալիշանի պատմահայեցողության և պատմական թեմաների ընտրության սկզբունքը:

«Դրախտ Հայաստանիի» մխիթարյան ըմբռնման ալիշանյան մանրակերտն է «Հայրունին»: Այն սկսվում է «Ի բամբին Հայկազնի» բանաստեղծությամբ, որում բանաստեղծական ընդունված կարգով Ալիշանը դիմում է մուսային՝ բանաստեղծական քնարի փոխարեն ոգեկոչելով հայ ռազմիկների բամբիռը:

Հայոց պատմության տարբեր դրվագները ներկայացնող չափածո ստեղծագործությունների շարքը սկսվում է «Հարսներգ առագաստի նախածնողացն» ծավալուն գործով, որը նվիրված է դրախտին և Ադամին ու Եվային ոչ միայն որպես մարդկության նախածնողների, այլև Հայաստանի՝ որպես «երկիր դրախտավայրի» ըմբռնմանը:

Նախահայրերից դեպի հայ ժողովրդի հերոսական նախնի Հայկ Նահապետը ընթանալով՝ հաջորդ բանաստեղծությունը նվիրում է Ադամի որդի Աբելին, ապա աստվածաշնչային նահապետների պատմության ընթացքը հայկական դրոշմ է ստանում ջրհեղեղով տապանի Արարատի վրա հանգչելով, «Ի նախագահն Մասիս» բանաստեղծությամբ: Ջրհեղեղի հայկական ավանդություններին են նվիրված Ալիշանի «Վտակն Ակոռոյ» և «Հանգիստ տապանին» բանաստեղծությունները:

Ինչպես որ հայ ավանդական պատմագրությամբ Նոյի Հաբեթ որդուց բխեցվում էր հայ ժողովրդի ծագումը՝ որպես «ազգն հաբեթեան», նույնպես և հաջորդ՝ «Աստղն Հայկին» բանաստեղծությունը ձևված է Հայկ Նահապետին, ով պատկերվում է որպես Օրիոնի համաստեղության հայկական համարժեքը: Բանաստեղծությունում գեղարվեստորեն արտահայտվել է այն ըմբռնումը, որը հետագայում տեղ էր գտնելու «Յուշիկքի» «Հայկայ շրջան» դրվագում և «Այրարատի» սկզբում:

Ալիշանի «Գարունք հայոց» բանաստեղծությամբ հայոց պատմությունը տեղայնանում և շարունակվում է հայկական լեռնաշխարհում, ուստի Հայկ Նահապետին և Հայկի սերունդներին են նվիրված հաջորդ երկու՝ «Հարք» և «Ի Հայկն և ի բաստ Հայկազանց» բանաստեղծությունները:

Այնուհետև հաջորդում են պատմական թեմաներով ստեղծագործություններ՝ նվիրված Արշակունյաց գահակալներին, Արտաշես Երկրորդին, Սուքիասյանց, Գրիգոր Լուսավորչին, սուրբ Գրիգորիսին, Հռիփսիմյանց, Տրդատ Մեծին, Մուշեղ Մամիկոնյանին, Ղևոնդյանց և Վարդանանց, Աշոտ Երկաթին և Անիի ու Բագրատունյաց վերջին արքա Գագիկ Երկրորդին:

Իսկ «Հայրունիի» բանաստեղծությունները թեմատիկ առումով հասնում են մինչև Կիլիկյան շրջան և Մխիթար Սեբաստացի:

Հատորն ավարտվում է «Նահապետի երգերով», որտեղ ուշ միջնադարի շնչով մեկ անգամ ևս անդրադարձ է կատարվում հայոց պատմությանը:

«Հայրունի» հատորում ըստ էության գտնում ենք պատմական թեմաների ընտրության՝ Ալիշանի հետագա ողջ գործունեության ծրագիրը: Հիշյալ թեմաները բանաստեղծորեն ներկայացնելով 1840–1850–ական թթ. գրված գործերում՝ նույն այս շրջանում և հաջորդող տասնամյակներին «Յուշիկը»-ում հրատարակում է վերջիններիս արձակ տարբերակները, «Սուփերք Հայկականը»-ի հատորներում լույս է ընծայում համաբնույթ վարքերը և վկայաբանությունները, ինչպես նաև նույն այս թեմաներին ծավալուն բաժիններ նվիրում տեղագրական հատորներում:

Այսպես՝ առաջին դարի նահատակ Սանդուխտ կույսին նվիրված «Շուշան Շաարշանայ» պոեմին հաջորդելու էր առաջին հայ վկայուհու նահատակության պատմության հրատարակումը «Սուփերքի» 8-րդ հատորում:

Գրիգոր Լուսավորչի թոռան՝ մանուկ Գրիգորիսին նվիրված «Ի նահատակն Վատնեան դաշտին» չափածոյից հետո Ալիշանը նախ՝ հրատարակելու էր վարքը «Սուփերքի» 10-րդ հատորում, ապա՝ գրական վարքապատումը «Յուշիկը»-ի առաջին հատորի «Հոգեփայլ սայլք Հայոց» դրվագում:

Ընդհանրական եկեղեցու հայրապետներից Հովհան Ոսկեբերանին նվիրված «Յետին կացուրդք Յոհաննու Ոսկեբերան հայրապետին» չափածոյին հաջորդում է վարքագրական «Խօսնակն եկեղեցոյ յանապատս Հայոց» դիմանկարը՝ «Յուշիկը»-ի երկրորդ հատորում:

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծության մեջ հայ ողբագրության ավանդների հետևողությամբ նա ևս իրեն ողբակից է ընտրում Խորենացուն, սակայն, հավատարիմ շարքի ընդհանուր ուղղվածությանը, ի տարբերություն Պատմահոր բարձր և վսեմ ոճի, պահելով հանդերձ այս նույն ոգին՝ իր ցավն արտահայտում է առավել պարզ, ժամանակի համար հարագատ և ընկալելի լեզվով և շարադրանքով:

Ջաշխարհն հայոց ևս լամ՝ զին քաղցրն հայրենիք⁷⁰:

Պատմական ողբի ժանրի մասին Պ. Խաչատրյանը գրում է, որ կառուցվածքային առումով այն ունի մուտք, որում «բանաստեղծը կամ դիմառնաբար առնված նրա հերոսը դիմում են ունկնդիրներին և հրավիրում ողբակցության, ապա հաջորդում է պատումի հիմնական մասը՝ այն պատմությունը, որին նվիրված է ողբը»: Վերջին՝ երրորդ մասում բնորոշվում է թշնամին, ու ստեղծագործությունն ավարտվում է լավատեսական տրամադրությամբ, հավա-

70 Պատմ. Ալիշան, Նուագք. Հայրունի, հատ. Գ, Վենետիկ, 1858, էջ 230 (Այսուհետև «Հայրունի» սույն հատորից կատարվող մեջբերումների էջերը կներկայացնենք մեջբերման վերջում էջը նշելով):

տով⁷¹: Նույն կառուցվածքն ունի և Ալիշանի գործը: Իր «թոյլ մատներով» վերջին անգամ վերցնելով «փետտած քնարը»՝ Հայոց Նահապետը դիմում է մուսային՝ արտահայտելու իր կրծքի դառն աղաղակները:

Այս բանաստեղծության մեջ Ալիշանը գուգահեռ է ընթանում Պատմահոր «Ողբին» և Խորենացու «հանուրց հիսիսականաց վեհագոյն» արտահայտության հետևողությամբ գրում է.

**Արևելից եւ հիւսիսոյ ազգացն հազար
ձոկան ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար: (230)**

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծության մեջ գեղարվեստորեն ներառվել և ստեղծագործաբար զարգացվել են հայ ողբագրության լավագույն ավանդները՝ սկսած Լաստիվերցուց և Շնորհալուց մինչև 17-18-րդ դարերի ողբագիրները:

Հայոց թագավորության անկման և քահանայապետական աթոռից Լուսավորչի տոհմից բառնալու խորենացիական ողբը Ալիշանը բանաստեղծորեն այսպես է համառոտում.

**Քո սուրբ յաջորդք քահանայիցրն պակսեցան,
Ամէն չարիք մըտին ի մէջ ժողովրդեան.
Քո ծառաներն՝ ապրստամբ քեզ դէմ առին սուր,
Քո իշխաններն՝ մէջ քո տան վառեցին հուր: (232)**

Այնուհետև միջնադարյան ավանդական պատմահայեցողությամբ դարձյալ ավելացնում է.

Գիտեմ, գիտեմ՝ այն մեր մեղաց պարտքն էր արդար: (236)

Հինգերորդ դարին հաջորդող քաղաքական վայրէջքի շրջանը Ալիշանը ողբում է ընդհանրացված ձևով, առանց պատմական որևէ դեպքի հիշատակման և աշխարհագրական տեղայնացման: Միակ բացառությունը Անին է: Հավատարիմ ողբի ժանրի կառուցվածքին՝ Ալիշանն այս ստեղծագործությունն ավարտում է լավատեսական վերջաբանով՝ Աստված պատժել է, ինքն էլ կների՝ ավանդական միջնադարյան ըմբռնմամբ.

**Չէ. ողորմածն Աստուած թողել չէ զՀայաստան.
Նա ինքն զինքն է գրլորել յայս խոր զընդան.**

71 Տե՛ս **Խաչատրյան Պ.**, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԵ դդ), Եր, 1969, էջ 43-44:

Երբ որ կամի՝ կանգնի... (236)

Այս ողբին հաջորդում է Ավագ և Փոքր Մասիսների երկխոսության ձևով կառուցված «Մասիսու սարերն», որում արդեն քննարկվում է ստեղծված անմխիթար կացությունից դուրս գալու ելքը: Նման երկխոսությունը հնարավորություն է ընձեռում Ավագ Մասիսի միջոցով մեկ անգամ ևս ներկայացնելու հերոսական անցյալը, իսկ Փոքր Մասիսի միջոցով շեշտելու, որ միայն այն հիշելով՝ չենք կարող դուրս գալ ներկա կացությունից:

Ավագ Մասիսը հայոց փառքի հարատևությունը եթե համեմատում է բխող աղբյուրի շարունակական ալիքների հետ, ապա Փոքր Մասիսը դրանք հակադրում է իրար:

**Գան, գրնան, դառնան ալիք գետերուն,
Չի դառնար որդւոց՝ պարծանք հայրերուն: (240)**

Հաջորդ պատկերը, որի շուրջ ծավալվում է հետագա ողջ երկխոսությունը, Ավագ Մասիսի ձյունեղեն գագաթն է: Եթե Փոքրը գտնում է, որ ոչ մի ուժ ի գործու չէ այն հալեցնել, և հայերի հետ զուգահեռով ասում է, թե այսպես սատել ու քարացել են նաև նրանց սրտերը, ապա Ավագ Մասիսը այդ սառնությունը համարում է «լոկ կեղևը», որի ներքո՝

Հանց տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ: (241)

Այսինքն՝ եթե սառնության այս պատկերով Փոքր Մասիսը ցանկանում է ասել, որ հայ ժողովուրդը ընդվզումի չի դիմում, ապա Ավագը շեշտում է, որ կենսական մեծ ուժեր ունի ամբարած իր մեջ:

Իտալական հեղափոխության կնիքը թեև նկատելի է Նահապետի երգերի բոլոր այն գործերի վրա, որոնք գրվել են վենետիկյան նշանավոր իրադարձությունից հետո, սակայն այս ապստամբության շունչն ու ոգին առավել զգալի է «Մասիսու սարերն» բանաստեղծության մեջ: Միմեոն Երեմյանի վկայությամբ՝ «Վենետիկոյ ամբոխին զայրացկոտ ապստամբողական օրերուն մեջ միևնոյն յեղափոխութեան ատեն, 1849 թ. մարտ 2-ին, կը գրէ Աւագ ու Փոքր Մասիսի խօսակցութիւնը»⁷²:

Ժամանակակիցներին և հաջորդող մի քանի սերունդներին ոգեկոչեցին հայոց Նահապետի խոսքերը:

Շարժիր հա՛ շարժիր, Աւագրդ Մասիս,

72 Երեմեան Ա., Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 112:

**Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.
Շընչէ հա՛ շընչէ ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտեացող նշան ըլնի... (245)**

Երեմյանի բնորոշմամբ՝ «Եւ Նահապետն Մասիսու ժայռէն կայծ հանեց իր երգով ու վառեց ազգին վառ վառ ճրագներ»⁷³:

«Հայրունիի» երկրորդ հրատարակության ժամանակ Ալիշանը ավելացրել է ևս երկու բանաստեղծություն: Նրանցից առաջինը՝ «Վերջին երգ վիրաւոր բամբռահարին», գետեղելով «Պլպուլն Աւարայրիից» հետո, վիրավոր և իր վերջին երգը երգել ցանկացող բամբռահարին Ալիշանն ասես դարձրել է վերջին ակորդը նախորդ գործի ընդհանուր հերոսական ոգու:

Երկրորդը՝ «Հայ հանձար» բանաստեղծությունը, գետեղել է շարքի վերջին՝ «Լուսնկայն գերեզմանաց հայոց» գործից առաջ և, մինչ վերջին անգամ լուսնին դիմելը, «Հայ հանձարի» միջոցով առավել է ամբողջացնում պատմական անցյալը՝ լավատեսության ավելի մեծ շեշտ հաղորդելով գալիքին: Անցյալի ու ներկայի հակադրությունը ստեղծելու համար Ալիշանը դիմառնական եղանակով դիմում է հայ հանձարին, թե ուր մնացին անցյալի մեծագործությունները: Այս հակադրությունը, բնականաբար, ողբագին տրամադրություններ էր ծնելու, և Ալիշանն ասելիքն արտահայտելիս դարձյալ մեծապես հետևում է ողբի ժանրին: «Հայ հանձարը» եռամաս կառուցվածք ունի: Մուտքում, հանձին հայ հանձարի, նա դիմում է մուսային: Այնուհետև գալիս է պատմական մասը, որտեղ հայ պատմագրությամբ նվիրագործված ըմբռումների համաձայն՝ բանաստեղծը ներկայացնում է անցյալի պատմությունը՝ սկսած Արարչագործությունից:

Միջնադարյան և նոր շրջանի ողբերում անցյալի ու ներկայի հակադրությունը շեշտելու տարածված ձևերից մեկն էր «ո՛ւր» սկսվածքով դիմումը, որը գալիս է Խորենացու «Ողբից»։ «Ո՛ւր է քաղցր աչացն հանդարտութիւն... ո՛ւր գուարթ շրթանցն ժպտումն... ո՛ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց...»⁷⁴, որն իր զարգացումը գտավ միջնադարյան ողբերում, այդ թվում՝ Շնորհալու և Ստեփանոս Օրբելյանի գործերում:

Շնորհալի

**Այժմ ո՛ւր է թագն քո զարդի և կամ պսակն հրաշալի,
Ո՛ւր զարդարունքն դշխոյի...⁷⁵:**

Օրբելյան

73 Նույն տեղում, էջ 113:

74 Մովսիս Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխտ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիփլիս, 1913, էջ 361:

75 **Ներսէս Շնորհալի**, Ողբ Եդեսիոյ, Եր, 1973, էջ 33:

**Ո՞ր են փեսայքն իմ առաջին,
...Ո՞ր թագաւորքն իմ են նախկին,
...Ո՞ր գօրութիւնք բիր բանակին...⁷⁶:**

Այն, սակայն, շեշտված ազգային դրոշմ և ուղղվածություն ստացավ հատկապես ուշ միջնադարի և 18-րդ դարի հայ բանաստեղծության մեջ⁷⁷: «Հայ հանձարի» առաջին իսկ տողն ևս սկսվում է այս հարցումով, և նույն տողում իսկ հաջորդում է պատասխանը.

**Ո՞ր ես հայ հանձար.–
Անցեր ես, անցեր...⁷⁸:**

Մի քանի տուն անց դարձյալ նույն հարցն է տրվում.

**Ո՞ր քո ճարտարաց աշխատանքն անհուն,
Ո՞ր քաջ և գիտուն որդւոցդ արդիւնքներ⁷⁹:**

«Պլպուլն Ավարայրի» պոեմում ստեղծագործական ուրույն զարգացում է ապրել վարդի և բլբուլի ավանդական մոտիվը: Քրիստոնեական այլաբանությամբ այն խորհրդանշում էր մի քանի իմաստներ, որոնցից գլխավորն էր բլբուլի՝ Գաբրիել հրեշտակապետ և Տիրամոր վարդը լինելը: Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ նաև 14-րդ դարից եթե «վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանությամբ ևս գրում են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել սեր, այլ որ այլաբանական ձևը դյուր էր գալիս կրոնավորներին»⁸⁰:

Ընդհանուր քրիստոնեական այլաբանություններին զուգահեռ՝ վարդը հայ բանաստեղծությունում խորհրդանշում էր նաև նահատակության գաղափարը: Այս առումով ստեղծագործական իսկական գյուտ կարելի է համարել Ալիշանի մտահղացումը Եղիշեի հոգին՝ որպես բլբուլ և վարդանին՝ վարդն «կարմրիկ» ներկայացնելը՝ այս ձևով անգամ կառուցվածքային առումով հավատարիմ մնալով ավանդական մոտիվին:

76 Աբեղյան Մ., Երկեր, հատ. Դ, Եր, 1970, էջ 268:

77 Հմմտ. Կարապետ Վարդապետ (1540 թ.). Ո՞ր են առաջին իշխանքն/Քաջ Մուշեղ և Գայլն Վահան (Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հատ. 1-ին, Եր, 1986, էջ 217): Գրիգոր Կեսարացի (ԺԶ-ԺԷ դդ.). Ով Հայաստան, հարս մեծարգոյ/Ո՞ր է շքեղ Սուրբ փեսայն քո («Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը», հատ. Բ, Եր, 1987, էջ 13): Ղազար Ջահկեցի (ԺԸ դ.). Ո՞ր են նախկին հարքն ամենայն / Գեղաշուք և ջոկափառ (Նազարյան Շ., Ողբի և սբափման բանաստեղծությունը, Եր, 1992, էջ 279):

78 Ղևոնդ Ալիշան, Նուագք, Հայրունի (2-րդ հրտ.), Կենտոիկ, 1867, էջ 342:

79 Նույն տեղում, էջ 343:

80 Աբեղյան Մ., Երկեր, հատ. Դ, էջ 399:

Վարդի և սոխակի սիրո ավանդական երգերում ասվում է, թե բլբուլը, մտնելով այգի, երգում էր վարդին, ապա այնտեղ չգտնելով նրան, շարունակ վարդ, վարդ կանչելով՝ թալկանում էր և ամեն տարի գարնան բացվելու հետ գալիս ու պարտեզում մյուս ծաղիկների մեջ իր վարդին էր որոնում և սկսում նույն երգը: Այն Ալիշանը մի քանի տողերի մեջ խտացրել է թե՛ «Պլպուլն Ավարայրի» նախերգում և թե՛ վերջում: Պոեմի սկզբում ասվում է, որ բլբուլը՝

**Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ
Որ գՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ: (259)**

Ալիշանը գեղարվեստորեն շարունակում է Վարդանի և Վասակի, հայոց ու պարսից բանակների հակադրության այն նկարագրությունը, որը կա Եղիշեի մոտ և այնքան համահունչ էր ռոմանտիզմի նախասիրած կերպարային հակադրությանը: Պարսից մատյան գնդի և հայոց այրուծիի բախումը ներկայացնում է հետևյալ պատկերով.

**Այլ քաջաձի հայն անվախ, համարձակ
Անճոռնի մարմնոցն ելնէ հակառակ: (265)**

Հավատարիմ միջնադարյան վկայաբանության ժանրին՝ Վարդանանց սպասվող նահատակությունը Ալիշանը նախ Վարդանին երևցած տեսիլով է ներկայացնում, ապա սկսվում է բուն ձակատամարտի նկարագրությունը: Ալիշանը ոչ թե սուկ չափածոյի է վերածել Եղիշեի պատմության այդ հատվածը, այլ պահպանելով ձակատամարտի զարգացման ընդհանուր ընթացքը՝ գեղարվեստորեն հետևել է նրան, բանաստեղծորեն բազմապատկելով նաև պատմիչի հաղորդած տեղեկությունները և նկարագրությունները: Թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին մարտական գործողությունների ընթացքը մանրամասնաբար չեն ներկայացնում, այլ հաղորդում են միայն մի քանի տեղեկություններ զորքերի դասավորության և տեղաշարժի մասին, որոնք բոլորը գեղարվեստորեն ներառել է Ալիշանը ձակատամարտի ընթացքը կենդանի ներկայացնելու համար:

Համեմատությունները վկայում են, որ ձակատամարտի բուն ընթացքը ներկայացնելիս Ալիշանը, հավատարիմ մնալով Եղիշեի վկայություններին, դրանք ստեղծագործաբար զարգացրել և բանաստեղծորեն բազմապատկել է ազգային ռոմանտիզմի և այս շրջանում տիրող ընդհանուր հայրենասիրական խանդավառության հայեցակետից:

«Պլպուլն Ավարայրի» և «Լուսնկայն գերեզմանացն հայոց» գործերում գլխավոր գործող անձը, որին դիմառնական եղանակով դիմում է հեղինակը, լուսինն է: Ի տարբերություն «Նահապետի երգերի» մյուս պատկերների,

որոնք կապվում են հայ միջնադարյան բանաստեղծության ավանդներին, լուսինը մեր հին գրականությունում, բացառությամբ հայրենների, ծառայում է որպես գեղարվեստական համեմատության միջոց, և Ալիշանի՝ դիմառնական եղանակով նրան դիմելը չի կարող ստուգաբանվել միայն հայ գրականության ավանդներով:

Լուսինն է այն առավել հստակ ու տեսանելի գրական պատկերը, որ այս շարքը կապում է օսսիանական երգերի հետ: Օսսիանին վերագրվող ստեղծագործություններում լուսինը երբեմնի փառքի հիշողության կրողն է, և նրա շողերը ծեր բարդի հոգում արթնացնում են անցյալի հուշերը: Ալիշանի մոտ ևս լուսնի շողերը արթնացնում են անցած ժամանակների վերհուշը՝ առիթ դառնալով նոր ոգեկոչման:

Ամայի դաշտերում լուսնի շողերով լուսավորվող հերոսների շիրմի օսսիանական տարածված պատկերով է ավարտվում նաև «Լուսնկայն գերեզմանացն հայոց» ստեղծագործությունը: Նահապետը, դիմելով լուսնին, որպես վերջին խնդրանք ասում է.

**Մէկ քար մ'այլ կայ յԱնծանօթ հովտին,
Գընա հոն կաթէ գվերջին քո լոյս,
Այն գերեզմանն է Նահապետին: (298)**

«Նահապետի երգերով» ստեղծագործական առումով արձագանքելով ժամանակի համաեվրոպական գրական շարժմանը՝ Ալիշանը դրանք ծառայեցնում է ժամանակի հայ գրականության առաջադրած խնդիրներին, օսսիանականությանը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները ներկայացնելով հայ միջնադարյան գրականության պատկերային համակարգի միջոցով, որպես գիտնական նրբորեն քննելով ու միջնադարի հայ բանաստեղծության լեզվական յուրահատկությունները և վերջինիս լեզվական շղարշով պատելով իր գործերը:

Ամփոփում

Ալիշանի արձակ և չափածո գրական ստեղծագործությունների, հայ միջնադարյան գրականության բնագրերի հրատարակությունների, ինչպես նաև պատմական աշխարհագրությանը և պատմագիտական տարբեր հարցերին նվիրված աշխատությունների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ նրա պատմագիտական ըմբռումները և հայոց պատմության տարբեր թեմաների ընտրության սկզբունքները ձևավորվել են 1840-1850-ական թթ. «Բազմավէպի» գրական հրապարակումներով:

րով, ապա շարունակվել գիտական և բնագրագիտական տարբեր աշխատանքներով:

Ալիշանը հանրագումարի բերեց հայոց պատմության թեմաներով Մխիթարյան նախորդող շրջանի հեղինակների գործերը Հայկ Նահապետից մինչև Դավիթ-Բեկ՝ պատմագիտական քննությունը միախառնելով իր խոր հայրենասիրությունը և ստեղծագործական շունչը:

Բանաստեղծ գիտնականը կարողացավ ստեղծել հայագիտական ուրույն մի շարադրանք՝ հիմնված հայկական ժամանակագրության և գեղագիտական համակարգի վրա:

Ավելի քան վեց տասնամյակների գիտական գործունեությունը որևէ փոփոխություն առաջ չբերեց նրա աշխարհայացքում և պատմագիտական ըմբռնումներում, այլ տարբեր թեմաներին նվիրված շարադրանքը հարստացվեց պատմական նորանոր փաստերով և նորահայտ բնագրերից բերված գրական պատկերներով, իսկ երիտասարդական վառվռուն երևակայությանը և խանդավառ ոճին աստիճանաբար հավելվեց ծերունագարդ նահապետի խոհական իմաստությունը:

Խորհրդանշական է նաև այն իրողությունը, որ Մխիթարյան 19-րդ դարը կնքվեց 1901 թ. լույս ընծայված «Հայապատում»-ով՝ հայ ավանդական պատմահայեցողության ամբողջական կոթողով, և 20-րդ դարի Մխիթարյան քննական նոր հայագիտությունը սկսվեց միաբանության անցած 200-ամյա ճանապարհի արժևորմանը նվիրված Հ. Բարսեղ Սարգիսյանի «Երկու հարիւրամեայ գրական գործունեութիւն Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան» (Վենետիկ, 1905 թ.) նույնքան կոթողային աշխատանքով:

Վարդան Գ. Դերիկյան – հետազոտում է հայ հին գրականությունը, հատկապես հայ միջնադարյան բանաստեղծության պատմությունը: Երկար տարիներ զբաղվելով հայկական ձեռագրերի նկարագրությամբ՝ կատարել է հայկական ձեռագրերի և հայ հնատիպ գրքի համեմատական քննությունը:

Summary

**THE MAIN ISSUES HISTORY OF ARMENIA IN GHEVOND
ALISHAN'S SCIENTIFIC AND LITERARY WORKS**

On the occasion of the 200th birth anniversary

Vardan G. Devrikyan
Doctor of Sciences in Philology

Key words – Movses Khorenatsi, Mkhitarist Congregation, Italian Revolution, Ossian Literary Movement, “Ayrarat”, Ani, Cilicia.

A comparative examination of the prose and verse literary works of Ghevond Alishan (1820-1901), editions of the original texts of medieval Armenian literature, as well as of works on historical geography and various historical issues shows that Alishan's historiographical perceptions and his principles of choosing different topics in Armenian history were formed through the literary publications of “Bazmavep” in 1840-1850, then continued with various scientific and textological works.

The summary of Alishan's more than half a century of scientific and literary activity became “Hayapatum”, in which Alishan presents the course of Armenian historiography from the pre-Mashtots period to the 18th century within the scientific understandings of the time, especially Movses Khorenatsi's “Armenian History” defending against the negative hypercriticism of the time.

The worldview which conditioned Alishan's scientific methodology and historical contemplation was formed in the Mkhitarist environment, where the centuries-old consecrated, sanctified notion that paradise used to be in Armenia and life originated and was restored for the second time after the flood underwent certain systematization.

This theory called “Paradise of Armenia”, which has become a unique national ideology, instilled in several generations of Armenians around the world the idea that the Armenian people have a mission to reclaim their homeland – the newly renovated paradise planted by God, and to rebuild it.

The volumes on the four provinces of Armenia – “Shirak” (1881), “Sisuan” (dedicated to Cilicia, 1885), “Ayrarat” (1890) and “Sisakan” (dedicated to Syunik 1893) were penned by Alishan with the same concept which occupy an intermediate place between geography and history.

The publication of these volumes was dictated by the literary and social issues raised in that period. It was a turning point back to the past and the history, when increasing censorship forced Eastern and Western Armenian intellectuals to express their words, national aspirations and desires in an allegorical way.

Just as the artistry of the narrative is observed in Alishan's scholarly studies, so in fiction, especially in the third volume entitled "Hayruni" of the five volumes of poetry called "Motifs" (1857-1858), (dedicated to the Homeland) (1858), scholar Alishan poses a number of historical questions, which refer to the historical destiny and historical perspective of the Armenian people. These statements of questions bear in themselves the strong emphasis of the spirit of the Italian Revolution of the 1840's.

Резюме

**ПРОБЛЕМЫ ИСТОРИИ АРМЕНИИ В НАУЧНЫХ И
ХУДОЖЕСТВЕННЫХ ПРОИЗВЕДЕНИЯХ
ГЕВОНДА АЛИШАНА
(К 200-летию со дня рождения)**

Вардан Г. Деврикян
Доктор филол. наук

Ключевые слова - Мовсес Хоренаци, Конгрегация мхитаристов, итальянская революция, Оссианское литературное движение, «Айрарат», Ани, Киликия.

Сравнительное изучение прозаических и поэтических литературных произведений Гевонда Алишана (1820-1901), его изданий оригиналов средневековой армянской литературы, а также трудов, посвященных исторической географии и разным историографическим вопросам, показывает, что историографические идеи Алишана и его принципы выбора разных тем из истории армянского народа сформировались в литературных публикациях в «Базмавепе» в 1840-1850-х годах, а затем были продолжены разными научными и текстологическими трудами.

Обобщением более чем полувековой научно-литературной деятельности Алишана стало «Повествование об армянах», в котором Алишан в рамках научных понятий того времени представляет путь армянской историографии с домаштоцовских времен до 18-го века, защищая хронологическую систему

армянской историографии и особенно «Историю Армении» Мовсеса Хоренаци от негативной гиперкритики своего времени.

Мировоззрение Алишана, обуславливающее его научную методологию и историческую концепцию, сформировалось в среде мхитаристов, где подверглось определенной систематизации считавшееся на протяжении веков непреложным и освященным мнение, что рай находился в Армении и после потопа оттуда жизнь взяла начало и была возобновлена.

Эта теория, получившая название «Рай Армении» и превратившаяся в своеобразную национальную идеологию, внушила нескольким поколениям разбросанного по всему свету армянства идею, что у армянского народа одна миссия: вновь обладать своей родиной – обновленным раем – и восстановить ее.

По этой же концепции написаны занимающие промежуточное положение между географией и историей тома, посвященные четырем областям Армении: «Ширак» (1881 г.), «Сисван» (о Киликии, 1885 г.), «Айрарат» (1890 г.) и «Сисакан» (о Сюнике, 1893 г.). Издание этих томов было продиктовано литературно-общественными проблемами, выдвинутыми этим периодом времени. Это было поворотом к прошлому и истории, когда все ужесточающаяся цензура заставляла восточноармянскую и западноармянскую интеллигенцию высказываться, выражать национальные стремления и мечты иносказательно.

Как в научных исследованиях Алишана заметна художественность изложения, так и в художественных произведениях и особенно в третьем томе (1858 г.) поэтического 5-томника «Мелодии» (1857-1858 гг.), озаглавленном «Айруни» (посвященный родине), ученый Алишан ставит ряд вопросов историографического характера, которые относятся к исторической судьбе и исторической перспективе армянского народа. В этих вопросах подчеркнута содержится воодушевление, навеянное итальянской революцией 1840-х гг.

REFERENCES

1. “Alishaně zhamanakakits‘neri husherum”, ashkht. S. Shtikyani, Yer., 1971 (**In Armenian**).
2. “Bařgirk‘ haykazean lezui”, hat. 2, Venetik, 1769 (**In Armenian**).
3. “Bazmavēp”, 1869, N 12 (**In Armenian**).
4. “Bazmavēp”, 1869, N 1-4 (**In Armenian**).
5. “Bazmavēp”, Venetik, 1847, N 10 (**In Armenian**).
6. “Dawit‘ Bēk kam “Patmut‘iwn Ghap‘ants‘wots’”, Venetik, 1978 (**In Armenian**).
7. “Geghuni”, Venetik, 1949 (**In Armenian**).
8. “Hawak‘umn Patmut‘ean Vardanay vardapeti”, Venetik, 1862 (**In Armenian**).

9. “Istoriya anglijskoj literatury”, t. 1, M., 1945 **(In Russian)**.
10. “Nor tetrak vor koch‘i hodorak”, t‘argmanut‘yunë yev arajabanë` P. Khach‘atryani, Yer., 1991 **(In Armenian)**.
11. **Abeghyan M.**, Yerker, hat. D, Yer., 1970 **(In Armenian)**.
12. **Ch‘amch‘ean M.**, Patmut‘iwn Hayots‘, hat. A, Venetik, 1784 **(In Armenian)**.
13. **Ch‘amch‘ean M.**, Patmut‘iwn Hayots‘, hat. G, Venetik, 1784 **(In Armenian)**.
14. **Ghevond Alishan**, Ayrarat, Venetik, 1890 **(In Armenian)**.
15. **Ghevond Alishan**, Hayapatum, Masn A, Patmich‘k‘ Hayots‘, Venetik, 1901 **(In Armenian)**.
16. **Ghevond Alishan**, Hayapatum, Masn B, Patmut‘iwnk‘ Hayots‘, Venetik, 1901 **(In Armenian)**.
17. **Ghevond Alishan**, K‘aghak‘akan ashkharhagrut‘iwn, Venetik, 1853 **(In Armenian)**.
18. **Ghevond Alishan**, Namakner, ashkht. S. Shtikyani, Yer., 1969 **(In Armenian)**.
19. **Ghevond Alishan**, Nshmark‘ haykakank‘, B prak, Venetik, 1870 **(In Armenian)**.
20. **Ghevond Alishan**, Nuagk‘, Hayruni (2-rd hrt.), Venetik, 1867 **(In Armenian)**.
21. **Ghevond Alishan**, Nuagk‘, Hayruni, hat. G, Venetik, 1858 **(In Armenian)**.
22. **Ghevond Alishan**, Shirak, Venetik, 1881 **(In Armenian)**.
23. **Ghevond Alishan**, Shnorhali yev paragay iwr, Venetik, 1873 **(In Armenian)**.
24. **Ghevond Alishan**, Sisakan. Teghagrut‘iwn Siwneats‘ ashkharhi, Venetik, 1893 **(In Armenian)**.
25. **Ghevond Alishan**, Sisuan, Venetik, 1885 **(In Armenian)**.
26. **Ghevond Alishan**, Teghagir Hayots‘ Metsats‘, Venetik, 1853 **(In Armenian)**.
27. **Ghevond Alishan**, Yushikk‘ hayreneats‘ Hayots‘, hat. A, Venetik, 1869 **(In Armenian)**.
28. **Inchichean Gh.**, Hnakhösut‘iwn ashkharhagrakan Hayastaneayts‘ ashkharhi, hat. A, Venetik, 1835 **(In Armenian)**.
29. **Khach‘atryan P.**, Hay mijnadaryan patmakan voghber (ZHD-ZHĒ dd.) Yer., 1969 **(In Armenian)**.
30. **Khach‘ikyan L.**, Yeghishei “Araratsots‘ meknut‘yunë”, Yer., 1992 **(In Armenian)**.
31. **Kirakosi vardapeti Gandzakets‘woy** Hamaṛōt patmut‘iwn, Venetik, 1865 **(In Armenian)**.
32. **Movses Khorenats‘i**, Hayots‘ patmut‘yun, ashkht. St. Malkhasyants‘i, Yer., 1961 **(In Armenian)**.
33. **Movsisi Khorenats‘woy** Patmut‘iwn Hayots‘, ashkht. M. Abeghean yew S. Yarut‘iwnean, Tp‘ghis, 1913 **(In Armenian)**.
34. **Nazaryan Sh.**, Voghbi yev st‘ap‘man banasteghtsut‘yunë, Yer., 1992 **(In Armenian)**.
35. **Nersēs Shnorhali**, Voghb Yedesioy, Yer., 1973 **(In Armenian)**.
36. **Öshakan Y.**, Hamapatker arevmtahay grakanut‘ean, hat. 2, Yerusaghēm, 1953 **(In Armenian)**.
37. **Sahakyan H.**, Ush mijnadari hay banasteghtsut‘yunë, hat. 1, Yer., 1986 **(In Armenian)**.
38. **Sahakyan H.**, Ush mijnadari hay banasteghtsut‘yunë, hat. B, Yer., 1987 **(In Armenian)**.
39. **Yeremean S.**, Kensagrut‘iwn H. Alishani, Venetik, 1902 **(In Armenian)**.